Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20090

200

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ, Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս.-ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1912-1913 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1914

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

ՋՈՒՂԱ — ՍՊԱՀԱՆ

Ե. Գ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

372 ա
Ա-93

372
Գ-93

17

2Ր11

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ, Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս.-ԿԱՏԱՐԻՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԵՒ

Գ.-ՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

1912-1913 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կարդացուած 1913 թ. յունիս 17-ին
Կենտր. դպրոցի դահլիճում
Դպրոցական Ակտին։

L. G. MINASSIAN
AV. NAZAR №. 242
JULFA ISFAHAN
* IRAN *

113390 — ԱՀ

4361-2002

Ցարգելի հանդիսականներ,

Վստահելով Ձեր համբերատար ուշադրությանը վրա՝ հիմա վերջին անգամ Ձեր առջև ուզում եմ ներկայացնել ազգ. դպրոցների ներկայ 1912—13 ուս. տ. կրթական վիճակը և մասամբ նաև այն պատկերը, որ դպրոցներն ունեցել են վերջին եռամեակում։

Առաջին հանգամանքը, որ ինչպես պիտի ունենանք, այն է, որ ինչպես նախորդ երկու տարիներում, այնպես և այս ուս. տարեշրջանում դպր. Ուսումն. վարչությանը քայլերը, ուսումնական-կրթական գործի մեջ կատարած բարեփոխումներն տ. հիմնաւորումները պատահական բնույթ չեն ունեցել, այլ առաջնորդուած են եղել արդի մանկավարժության առաջնորդությամբ՝ նպատակայարմար ձևով յարմարեցուած սեզական պայմաններին։

Մեզ համար էականն եղել է տների հոգեկան ու ֆիզիքական ոյժերի ներդաշնակ զարգացումը. միակողմանի ուսուցման մենք միանգամայն հակառակ ենք եղել՝ թէ դասերով, թէ վերաբերմունքով և թէ դաստիարակչ. այլ միջոցներով մենք ուզեցել ենք կրթել մեր տների ոչ միայն միտքը, այլ և զգացումը, ոչ միայն ֆիզիքապես այլև կամապէս։ Դեռ անցեալ տարի մենք մանրամասնօրէն խօսել ենք դպրոցների նպատակի մասին (որ պարզուած է դպրոցներիս նորակազմ Ներքին կանոնադրության մէջ) և պարզել ենք այն հիմնական սկզբունքները, որոնցով մենք առաջնորդուել ենք։

Ցաւալի դժնդակ ու արգելիչ հանգամանքների մէջ մենք ստիպուած ենք եղել գործադրել մեր սկզբունքները. անօրինակ ու եզակի պայմանները փորձել են արգելքներ հանել մեր դէմ, բայց դրանք միշտ բաղխուելով մեր զեկավարող շիտակ ու առողջ սկզբունքների ժայռին՝ յետ են ընկրկել։ Այս բոլորի հանդէպ, ինչպես նախորդ երկու տարիներում, այս տարի ևս դպրոցներիս Մանկավարժ. Խորհուրդն եզակի համերաշխություն է ունեցել մանկավ. հիմնական սկզբունքների ու էական խնդիրների շուրջը և անսայթաք ընթացել է դպրոցներիս յառաջադիմության ու բարեկարգության գործի շաւղով։

ԴՊՐՈՑՆԵՐ

Դպրոցներիս Ուս. Վարչության խնամքին յանձնուած Կենտրոնական Գ.-Քանանեան և Ս.-Կատարինեան դպրոցները ունեցել են հետևեալ դասարանները—Գ.-Քանանեան դպրոցը՝

Ա. բաժ. (հ. և զ.), Բ բ. (հ., զ. և պատր.), Գ բ. (հ. և զ.). Ա դաս. (հ. և զ.) և Բ դ. տղ., ընդամենը՝ 10 դասարան։

Կենտր. դպրոցն ունեցել է Գ, Դ, Ե և Զ դասարան, (ընդամենը 4 դաս.), իսկ Ս.-Կատ. դպրոցը՝ Բ, Գ, Դ, Ե և Զ դաս. (ընդամենը 5 դասարան)։

Երեք դպրոցների դասարանների թիւը հաւասար է 19-ի. հաշուելով նաև Գ.-Քանանեան Մանկապարտէզի Ա, Բ և Գ բաժանմունքները՝ բոլոր դասարանների համագումար թիւը լինում է 22։

Դասարաններն ընդհանրապէս իրանց մեծութեամբ ու օգտաւորումով բարեբաղդ պայմանների մէջ են եղել և ընդհանրապէս համապատասխան դասարանի աշակերտների թիւին, ինչպէս պիտի տեսնենք հետևեալ ցուցակից. —

	Սենեակի տարողութիւնը	կարող է ունենալ (սատր. յարկի դահլիճն է)	ունի
Մանկապ. Ա բաժ.	513 խոր. մետր		65 աշ.
» Բ »	154 » »	31 աշ.	37 »
» Գ »	154 » »	31 »	38 »
Գ.-Քան. դպրոց			
Ա. բաժ. հ.	112 » »	22 »	30 »
Ա » զ.	221 » »	44 »	31 »
Բ » հ.	160 » »	32 »	32 »
Բ » զ.	158 » »	32 »	32 »
Բ » պ. (Ս.-Կ. չենքում)	147 » »	29 »	30 »
Գ » հ.	252 » »	50 »	38 »
Գ » զ.	260 » »	52 »	39 »
Ա զ հ.	235 » »	47 »	33 »
Գ.-Քան. դպր.			
Ա դաս. զ.	251 » »	50 »	36 »
Բ դ. տղ. (Կենտր. դպրոց)	157 » »	31 »	19 »
Կենտր. դպրոց			
Գ դաս.	157 » »	31 »	17 »
Դ »	109 » »	21 »	8 »
Ե »	109 » »	21 »	12 »
Զ »	96 » »	19 »	4 »

	Սենեակի տարողութիւնը	կարող է ունենալ	ունի
Ս.-Կաթ. դպր.			
Բ դաս.	147 խոր. մետր.	29 աշակերտ.	21 աշ.
Գ »	147 » »	29 »	13+17
Դ »	147 » »	29 »	12+ 8
Ե »	147 » »	29 »	11+13
Զ »	75 » »	15 »	2+ 4

Խաղալու բագերը

Մանկապարտէզի բաղը	355 ք. մետր	137 աշակերտով
Գ.-Քան. դպրոցի »	2054 » »	317 »
Կենտր. » »	3684 » »	41 »
Ս. Կատ. » »	470 » »	59 »
» » » դրսի »	654 » »	

Միջանցքներ եւ սրահներ

Գ.-Քան. դպր. 3 միջանցքները (միասին)	227 ք. մետր.	
Ս.-Կատ. » սրահը	54 » »	
Կենտր. » »	201 » »	

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ

Այս տարի հնարաւորութիւն ունեցանք Գ.-Քանանեան Մանկապարտէզի գլխաւորների մէջ նոր փոփոխութիւններ մտցնելու։ Մանկապարտէզը, կարելի է ասել, վերջնականապէս ուզում է ստանալ այն կերպարանքն ու վիճակը, որ պիտի ունենայ քիչ թէ շատ կազմակերպուած ու բարեկարգ մի մանկապարտէզ։ Մինչև այժմ մանկապարտէզի իւրաքանչիւր դասարան յանձնուում էր մի վարժուհու, որը պիտի աւանդէր բոլոր առարկաները. սակայն այդ դրութիւնը Մանկվ. Խորհրդի կողմից՝ մի քանի տեսական ու գործնական նկատումներով անյարմար դատուելով՝ որոշուեց, որ մանկապարտէզի իւրաքանչիւր վարժուհի փոփոխակի դասեր ունենայ երեք բաժանմունքներում էլ։ Մէկ տարուայ փորձն եկաւ ապացուցելու, որ Մանկվ. Խորհուրդը չէ սխալուել իւր որոշման օգտակարութեան մէջ։ Մանկապարտէզի գլխաւոր անյարմարութիւնը կայանում է նրանում, որ չունի ընդարձակ բաղ ու պարտէզ, ուր երեխաները հնարաւորութիւն

ունենան ազատ խաղալու ու պարտիզի աշխատանքների նրբիրուելու: Զնայած դրան, հնարաւոր չափով եղել են նաև դրսի աշխատանքներ՝ կաւի, աւազի և այլն: Մանկապարտէզի վարժուհիները սր. սր. Կ. Յարութիւնեան, Մ. Սիմէոնեան և Ա. Աբրահամեան երեք բաժանմունքներում դեկավարել ու ուսանել են հետևեալ դբաղումներն ու առարկաները՝ պատմութիւն, հայրենագիտութիւն, ֆրէօբելեան պարգևներ, գծագրութիւն, հիւսուածք, երգեցողութիւն, սիսեռի աշխատանք, թուղթ ծալել, ճիպոտների աշխատանք, արտասանութիւններ, թիթեղանկարչութիւն, ծակծկել ու կարել, հաշուել, ձեռագործ և այլն: Նաև ոչքի դարնող է եղել դբաղումների ժամանակ երեխաների կենսուրախութիւնն ու հեռաքրքրութիւնը, որոնք էական պայման են դաստիարակչական օգտակար ազդեցութեանց համար:

Մանկապարտէզի երեխաների խաղալուն մեծ չափով խանգարեց այն, որ մեզնից ու Մանկ. Խորհրդից անկախ պատճառներով Մանկապարտէզի փայտեայ խաղալեւնակը ուրուբ անյարմարութիւնների շնորհիւ դատապարտուեց անգործութեան, մինչև որ կատարուի պէտք եղած վերանորոգութիւնը, որը, սակայն, ցարդ չի կատարուած:

Մանկապարտէզի սաների ընդհ. թիւն եղել է 138, որից 60 տղայ, 78 աղջիկ, (այս 138 հոգուց 13-ը կազմուած վիճակագրութեան մէջ ի սկզբի չեն առնուած՝ ուս. տ. վերջին ընդունուած լինելու պատճառով): 125 սաներից 118-ն ունին ծնողներ, իսկ 7ը որբ են. մօտ 100 հոգին գրագէտ ծնողների զաւակներ են, իսկ 25-ը՝ անգրագէտ: Ըստ նիւթական վիճակի երեխաներն այսպէս են բաժանուում.

10	հոգի հարուստի զաւակ
58	» միջ. կար. անձ. »
28	» չքաւոր » »
29	» ապքաս » »
125	հոգի

Թուերը ցոյց են տալիս, որ երեխաների մեծագոյն մասը չունեւոր ծնողների զաւակներն են. այդ պատճառով էլ ընդհանրապէս երեխաները հագնում են ապքաս և յաճախ անմաքուր ու պատռուտուած: 125 հոգուց միայն 99-ն ունին համազգեստ (77%), 26-ը չունին: 99 հոգի համազգեստ ունեցողներից 38 հոգին (30.5%) զգեստ ձրիաբար են ստանում Ազգաբանական ընկերութիւնից: Փոստական պիտոյքներ ի հաշիւ գաղրոցի տրուում է բոլոր երեխաներին (125 հոգի): Անհրաժեշտ նիւթեղէններ ձեռք բերելու համար մեծ նշանակութիւն ունեցաւ նաև այն, որ մեծապ. պ. Միլիլ Եսայեանը 40 թուման նուիրեց՝ գունաւոր թղթեր և այլ նիւթեղէններ գնելու համար: Պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս յարգելի նուիրատուին: Մանկապարտէզի 125 սաներից 107-ը (85,5%) ջուղայեցիներ են, իսկ 18-ն (14,5%) օտար վայրերից:

Զբաղումների կանոնաւոր ընթացքը խանգարեց «կապոյտ հոգ» հիւանդութիւնը, որ նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսներին մեծ չափով տարածուած էր: Այդ պատճառով գաղրոցներիս Վարչութիւնը նպատակայարմար գտաւ երկու շաբաթով զբաղումները դադարեցնել Մանկապարտիզում ու Գ.-Քանանեան գաղրոցի Ա. և Բ բաժանմունքներում: Տարուայ ընթացքում մանկապարտէզի երեխաներից զանազան ժամանակներում հիւանդացել են 113 հոգի (98,5%): Յաճախակի բացակայութիւնները մեծ չափով փնասել են զբաղումների կանոնաւոր յառաջադիմութեանը. տարուայ ընթացքում 7455 բացակայութիւն է եղել, իւրաքանչիւր երեխայի միջին հաշուով՝ 59 դաս: Եթէ նախորդ տարիների հետ համեմատելու լինինք, պիտի տեսնենք, որ մանկապարտէզի սաների բացակայութիւնը գնալով սկսել է խիստ պակասել: Զնայած կլիմայական ու միւս կողմից էլ նիւթական անհարմարներին՝ երեխաները սիրով են մանկապարտէզ յաճախել: Գրքաւոր պատճառը պէտք է համարել տրուած աշխատանքների գրաւչութիւնը և դէպի զբաղումներն ունեցած սէրն

ու հետաքրքրութիւնը։

Մանկապարտէզի սաների ընդհանուր թիւը տարուայ սկզբում եղել է 112, յունուարին՝ 127, իսկ յունիսին 125+13=138 հոգի։

Որ մանկապարտէզը կատարելիք մեծ դեր ունի այսպիսի մի վայրում, ուր ընտանեկան միայն յոռի դաստիարակութիւն գոյութիւն ունի, կամ, աւելի ճիշտ, ոչ մի դաստիարկութիւն էլ գոյութիւն չունի, և որ մանկապարտէզը կարողացել է դաստիարակիչ դեր կատարել, ազդել երեխաների սրտի ու մտքի վրայ, ապացոյց այն, որ շատ ծնողներ թէ բանաւոր և թէ գրաւոր յաճախ իրանց անկեղծ շնորհակալութիւնն են արտայայտել։

Այս տարի էլ մանկապարտէզի սաները Նոր-տարուայ գալը։ երեկոյթի մէջ ուշեցան իրանց բաժինը։ երգեցին, պարեցին, արտասանեցին ու նոյնիսկ կատարեցին փոքրիկ մի թատերախաղ, որոնցով մեծ հաճոյք ու զոհունակութիւն պատճառեցին իրանց ծնողներին։

Այս տարի էլ գնուած և բերել են տրուած որոշ քանակութեամբ անհրաժեշտ նիւթեր ու իրեղէններ։— Մանկապարտէզի Ի բաժանմունքի դաստիարակչուհու պաշտօնը վարել է օր. Կ. Յարութիւնեան, Բ բաժ.՝ օր. Մ. Սիմէոնեան, իսկ Ա. բաժ.՝ օր. Աստղիկ Աբրահամեան։

Այստեղ պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս օր. Ա. Աբրահամեանին, որ ի նշան երախտագիտութեան՝ համաձայնեց միանգամայն ձրիաբար վարել իւր պաշտօնը՝ շաբաթական 23 ժամ զրաղուելով։

ՈՒՍՄԱՆ ՇՐՋԱՆ

Այս տարի դպրոցներում ընդունելութիւններն սկսուել են օգոստոս 27-ին, իսկ դասերը՝ կանոնաւորապէս սեպտ. 1-ից։ Սեպտեմբերին ուսուցչական խումբը միանգամայն պատրաստ լինելով՝ տարուայ սկզբում ուշացման հետ կապուած ոչ մի խանգարում տեղի չի ունեցել դասերի մէջ։ Դասերը դադա-

րել են յունիս 10-ին, իսկ Զ դասարանների սաներն արձակուրդ են ստացել մայիս 1-ին, որպէսզի կարողանան հարցաքննութեանց համար պատրաստուել։ Նոյն նպատակով Ե դասարանների սաներին էլ արձակուրդ է տրուել մայիս 27-ին։ Դասեր չեն եղել նաև Զատկի, Զբօրհնէքի (երկուական շաբաթ), Բարեկենդանի (մէկ շաբաթ) և ընդունուած ուրիշ տօն օրերին։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Այս տարի ուսուցչ. խումբը կազմուած է եղել 23 հոգուց (տարուայ սկզբում՝ 22)։ Դպրոցներիս Վարչութիւնը Բ բաժ.-ի համար մի զուգընթաց ևս (պատրաստական անցանուած) բացելու կարիք զգալով՝ նոյեմբեր վերջին հրաւիրեց պ. Ս. Կիրակոսեանին, որ դեկտ. 1-ից մտաւ իր պաշտօնի մէջ։

Ուսուցիչների-վարժուհիների դասերի միջին թիւն եղել է 24. ուսուցիչներն ունեցել են ընդհանրապէս 26-27 դաս, իսկ վարժուհիները՝ 24-25 դաս։ Պակաս թուով դասեր ունեցել են միայն այն դասատուները, որոնք դպրոցական ոչ ուրիշ պաշտօն էլ են ունեցել ստանձնած (վերակացութիւն, գրավաճառանոցի կառավարչութիւն և այլն), և կամ յատուկ համաձայնութիւն ու պայմաններ են ի նկատի առնուել։

1906 թ. դպրոցներիս վերատեսուչ հ. Բ. վ. Վարդազարեանի կազմած տեղեկագրից երևում է, որ այդ ուսումնական տարում ուսուցիչների դասերի միջին թիւը եղել է 22։ Անհիմն է այն կարծիքը, թէ «այժմ ուսուցիչները քիչ դասեր ունին»։

Ներկայ 1912-13 ուս տարում պաշտօնավարող դասատուներն ու նրանց աւանդած դասերն են.

Ի. Աբգարեան պ. Ստեփան— 26 դաս.

Անգլերէն	Զ դաս.	օր. 4 ժ.	Տոմարակալ.	Զ դաս.	տղ. 2 ժ.
»	Դ »	մ. 4 »	Անգլ. Աշխարհ.	Ե »	մ. 1 »
»	Բ »	օր. 5 »	Ալգեբրա	Զ »	օր. 2 »
»	Բ »	տղ. 5 »	Երկրաչափ.	Զ »	» 2 »
			Թուաբան.	Զ »	» 1 »

2. Աբզարեան պ. Տիգրան — 24 դաս.

Աշխարհագրութ.	Ա. դաս.	հ. 2 ժ.	Նկարչութ.	Գ դաս.	մ. 1 ժ.
»	Ա. »	զ. 2 »	»	Բ »	տղ. 1 »
Բնական պատմ.	Բ »	տղ 3 »	»	Բ »	օր. 1 »
Հայերէն	Ա. »	հ. 5 »	»	Ա. »	հ. 2 »
»	Ա. »	զ. 5 »	»	Ա. »	զ. 2 »

3. Աբրահամեան or Աստղիկ — 23 դաս.

Մանկապարտէզի զբաղումներից ու առարկաներից:

4. Աղանեան Տէր-Վահան քհնյ. — 22 դաս.

Կրօնագիտ.	Ա. դաս.	հ. 2 ժ.	Կրօնագիտ.	Բ բաժ.	հ. 2 ժ.
»	Ա. դաս.	զ. 2 ժ.	»	Բ »	զ. 2 »
»	Գ բաժ.	հ. 2 ժ.	Հայերէն	Գ »	հ. 5 »
»	Գ բաժ.	զ. 2 ժ.	»	Գ »	զ. 5 »

5. Գալստեան s. Ծաղիկ — 23 դաս.

Ա. հ. և զ. բաժ. Հայերէնն ու միւս առարկաներից:

6. Գեղասիմեան պ. Արմենակ — 16 դաս.

Հայերէն	Ե դաս.	միայ. 4 ժ.	Մանկվարժ.	Զ դաս.	մ. 3 ժ.
»	Զ »	» 4 ժ.	Բան. տես.	Ե «	մ. 2 ժ.
Համբերգ	Ա-Զ »	» 3 ժ.			

7. Գեղասիմեան s. Նուարդ — 24 դաս. 2 դաս միայնակ (ամբորդ ժամ)

Կարուձև	Զ դաս.	օր. 2 ժ.	Բնակ. պատմ.	Դ դաս.	մ. 3 ժ.
»	Ե դաս.	օր. 2 ժ.	»	Բ »	օր. 3 ժ.
»	Դ դաս.	օր. 2 ժ.	»	Ա. »	հ. 3 ժ.
Ձեռագործ	Զ դաս.	օր. 2 ժ.	»	Ա. »	զ. 3 ժ.
»	Ե դաս.	օր. 2 ժ.	Առանձին անտ.	Զ »	օր. 2 ժ.

8. Դալբեան պ. Եփրեմ — 24 դաս.

Թուաբերէն	Զ դաս.	տղ. 3 ժ.	Ֆրանս.	Գ և Դ	դ. մ. 3 ժ.
»	Ե դաս.	տղ. 3 ժ.	»	Ե և Զ	դ. մ. 3 ժ.
»	Դ դաս.	տղ. 3 ժ.	Հայրենագ.	Գ բաժ.	հ. 2 ժ.
»	Գ դաս.	տղ. 3 ժ.	»	Գ բաժ.	զ. 2 ժ.
			Հայ պատմ.	Ե. դ.	հ. 2 ժ.

Ծանօթութիւն.— Համաձայն դպրոցներիս Մանկվ. Խորհրդի որոշման՝ նոյեմբեր ամսից, Ֆրանսերէն դասերը դադարեցնելուց յետոյ, այդ դասերի փոխարէն նոյն դասարաններում դասատուն պարապել է ռուսերէն:

9. Զոհրաբեան or. Իշխանուհի — 25 դաս.

Թուաբանութ.	Գ բաժ.	հ. 5 ժ.	Իրազն.	Գ բաժ.	հ. 2 ժ.
»	Գ բաժ.	զ. 5 ժ.	»	Գ բաժ.	զ. 2 ժ.
»	Բ բաժ.	հ. 5 ժ.	Նկարչ.	Գ բաժ.	հ. 2 ժ.
Հայոց պատմ.	Ա. դաս.	զ. 2 ժ.	»	Գ բաժ.	զ. 2 ժ.

10. Զոհրաբեան or. Նեկտարինէ — 26 դաս.

Ձեռագործ	Գ դաս.	օր. 2 ժամ	Հայերէն	Բ բաժ.	զ. 6 ժ.
»	Գ դաս.	օր. 2 »	Գեղագրութ.	Գ բաժ.	զ. 1 ժ.
»	Բ դաս.	օր. 2 »	»	Գ բաժ.	հ. 1 ժ.
»	Երգեցիկ.	Ա. դ. մ. 3 »	Մարմնամարզ.	Բ բաժ.	հ. 1 ժ.
»	»	Գ բ. մ. 3 »	»	Բ բաժ.	զ. 1 ժ.
»		Բ բ. հ. 2 »			
»		Բ բ. զ. 2 »			

11. Կարապետեան պ. Մկրտում — 24 դ. և վերակացութ.

Անգլերէն	Զ դաս.	տղ. 4 ժ.	Անգլ. պատմ.	Ե դ.	մ. 2 ժ.
»	Ե դաս.	մ. 4 ժ.	Անգլ. գր. պատմ.	Զ դ.	տղ. 1 ժ.
»	Դ դաս.	մ. 5 ժ.	Ձայնագրութիւն	Բ դ.	» 2 ժ.
Ձայնագրութ.	Բ դաս.	օր. 2 ժ.	»	Գ դ.	մ. 2 ժ.
»	Ա. դաս.	հ. 1 ժ.	(այն շաբաթական 3 ժամ գործնական երաժշտութիւն:)		
»	Ա. դաս.	զ. 1 ժ.			

12. Իսրայէլեան or. Եղիսաբեթ — 25 դաս.

Անգլերէն	Բ բաժ.	զ. 4 ժ.	Թուաբան.	Բ դաս.	օր. 4 ժ.
,,	Գ. բաժ.	զ 5 ժ.	,,	Ա. դաս.	հ. 4 ժ.
,,	Ա. դաս.	զ. 4 ժ.	,,	Ա. դաս.	զ. 4 ժ.

13. Կիրակոսեան Տէր-Գարեգին քհնյ. — 27 դաս.

Ալգեբրա	Զ դաս.	տղ. 2 ժ.	Թուաբանութ.	Գ դ.	օր. 3 ժ.
,,	Ե դաս.	մ. 2 ժ.	,,	Դ դ.	օր. 2 ժ.
,,	Դ դաս.	մ. 2 ժ.	,,	Ե դ.	տղ. 1 ժ.
Երկրաչափ.	Զ դաս.	տղ. 2 ժ.	,,	Ե դ.	օր. 1 ժ.
,,	Ե դաս.	մ. 2 ժ.	,,	Բ դ.	տղ. 4 ժ.
,,	Դ դաս.	մ. 1 ժ.	,,	Գ դ.	տղ. 3 ժ.
			,,	Դ դ.	տղ. 2 ժ.

14. Կիրակոսեան պ. Ստեփան — 27 դաս.

Բ բաժանմունքի բոլոր առարկաները (մաս-մաս՝ երեք բաժանմունքներում):

15 Միրզա Մահմադ — 21 դաս.

Պարսկերէն	Գ բաժ. մ.	3 ժ.	Պարսկ.	Դ դաս. տղ.	3 ժ.
»	Ա. դաս. մ.	3 ժ.	»	Ե դաս. տղ.	3 ժ.
»	Բ դաս. տղ.	3 ժ.	»	Զ դաս. տղ.	3 ժ.
»	Գ դաս. տղ.	3 ժ.			

16 Յարութիւնեան պ. Սրմենակ — 26 դաս.

Հայերէն	Բ դաս. տղ.	4 ժ	Ֆիզիկա	Զ դաս. մ.	3 ժ.
»	Բ դաս. օր.	4 ժ.	»	Ե դաս. մ.	3 ժ.
Երկր. ձև.	Բ դաս. տղ.	1 ժ.	»	Դ դաս. մ.	3 ժ.
» »	Բ դաս. օր.	1 ժ.	Քիմիա	Զ դաս. մ.	2 ժ.
» »	Ա դաս. հ.	1 ժ.	Մաթեմատ.	Բ-Զ դաս. տղ.	3 ժ.
» »	Ա դաս. գ.	1 ժ.			

17 Յովհաննիսեան պ. Ալեքսան — 26 դաս.

Ընդհ. Աշխարհ.	Բ դաս. օր.	2 ժ.	Հայերէն	Գ դաս. մ	4 ժ.
« »	Բ դաս. տղ.	2 ժ.			
» »	Գ դաս. մ.	2 ժ.	Ընդհ. պատմ.	Գ դաս. մ	2 ժ.
» »	Դ դաս. մ.	2 ժ.	» »	Դ դաս. մ.	2 ժ.
Հայոց Գր. պատ.	Զ դաս. մ.	2 ժ.	» »	Ե դաս. մ	2 ժ.
Հայերէն	Դ դաս. մ.	4 ժ.	» »	Զ դաս. մ	2 ժ.

18. Յովհաննիսեան Տէր-Եսայի քհնյ. — 18 դաս.

Կրօնագիտութ.	Բ դ. օր.	2 ժ.	Հայ. պատմ.	Ե դաս. մ.	2 ժամ
»	Բ դ. տղ.	2 ժ.	,,	Դ դաս. մ.	2 ժամ
»	Գ դ. մ.	2 ժ.	,,	Գ դաս. մ.	2 ժամ
» և եկ. պատմ.	Դ դ. մ.	2 ժ.	,,	Բ դաս. օր.	2 ժամ
			,,	Բ դաս. տղ.	2 ժամ

19. Յարութիւնեան or. Կատարինէ — 23 դաս.

Մանկապարտէզի զբաղումներ ու առարկաներ։

Դանօր.— Յարուայ կէսից ուելին ուելորդ դաս է պարապել շաբաթական 5 ժամ, կէսօրից յետոյ, մանկապարէզի Գ բաժանմունքում։

20. Շուքուրեան պ. Պօղոս — 23 դ. և վերակացութիւն

Անգլերէն	Բ բաժ. հ.	4 ժամ	Գեղագրութիւն	Ա. դաս. հ.	1 ժ.
»	Գ բաժ. հ.	5 ժամ	,,	Ա. դաս. գ.	1 ժ.
»	Ա դաս. մ.	4 ժամ	,,	Գ բաժ. հ.	1 ժ.
Հայերէն	Բ բաժ. հ.	6 ժամ	,,	Բ բաժ. հ.	1 ժ.

21. Սիմէոնեան or. Համասփիւռ — 23 դաս.

Ա. հիմնական և զուգ. բաժ. թուաբանութիւններն և այլ դասերը։

22. Սիմէոնեան or. Մարիամ — 23 դ. և վերակաց.

Մանկապարտէզի զբաղումներ ու առարկաներ։

23. Քամարգարեան s. Ծովինար — 21 դ. և վերակաց.

Թուաբանութիւն	Բ բաժ. պ.	5 ժ.	Երգեց.	Բ բաժ. պ.	2 ժամ
Իրազննութիւն	Բ բաժ. պ.	2 ժ.	,,	Բ բաժ. հ.	2 ժամ
Նկարչութիւն	Բ բաժ. հ.	2 ժ.	,,	Բ բաժ. գ.	2 ժամ
,,	Բ բաժ. գ.	2 ժ.	,,	Գ բաժ. հ.	2 ժամ
			,,	Գ բաժ. գ.	2 ժամ

Դասատուներից շատերն իրանց խղճմիտ աշխատանքի շնորհիւ՝ դասաւանդման մէջ մտցրել են նշանակալից փոփոխութիւններ ու նկատելի են դարձել իրանց բարեխղճութեամբ ու կատարելագործուելու ձգտումով։

Դասատուներից պ. Պ. Նուքուրեանը կատարել է Գ.-Քանանեան դպրոցի մշտական վերակացութիւնը, պ. Մ. Կարապետեանը՝ Կենտրոնական դպրոցինը և տ. Ծ. Քամարգարեանը՝ Ս.-Կատարինեան դպրոցինը։ Գ.-Քանանեան դպրոցում շաբթէ-շաբաթ հերթական վերակացութիւն կատարել են՝ տ. Ծ. Գալստեան, օր. օր. Ի. Զոհրաբեան, Ն. Զոհրաբեան, Հ. Սիմէոնեան ու Ն. Իսրայէլեան և պ. Ս. Կիրակոսեան։

Վերակացութեան գործը Գ.-Քանանեան և Կենտր. դպրոցում տարուել է բաւարար չափով, իսկ Ս.-Կատարինեան դպրոցում՝ անբաւարար։ Գ.-Քանանեան դպրոցի կարգապահութիւնը լաւ հիմքերի վրա դնելու համար և իսկական դաստիարակիչ դիսցիպլին մտցնելու համար՝ ամենից առաջ անհրաժեշտ է, որ վերակացուն ոչ մի դաս չունենայ։ Իսկական դիսցիպլինը կրթիչ ու դաստիարակիչ ազդեցութիւն պիտի ունենայ։ Մենք դիսցիպլինը երբէք արտաքին կարգ ու կանոնների ձևական պահպանման մէջ չենք տեսնում։ Քանի որ նիւթական միջոցների սղութեան պատճառով՝ վերակացութիւնը պիտի յանձնուի դասերով ծանրաբեռնուած ու-

սուցիչների (23-24 դաս), դիսցիպլինի գործը միշտ կասեալ վիճակի մէջ է մնալու։ Ինչպէս միշտ շեշտել ենք, կրկին պարտք ենք համարում յիշեցնել, որ Գ.-Քանանեան դպրոցի համար անհրաժեշտ է երկու մշտական վերակացու։

Գրադարանապետի պաշտօնն ստանձնել է Տէր-Վ. քհնյ. Աղանեան, Մանկվ. ժողովների ու տեսչական քարտուղարի պաշտօնը՝ պ. Ալ. Յովհաննիսեան. Ա.շ. Մխիթեան ղեկավարութիւնն յանձն է առել տ. Ն. Գերասիմեան։

Դասատուները կատարել են նաև դասարանական դաստիարակի պաշտօն հետևեալ ցուցակի համեմատ.—

Գ.-Քանանեան Մանկապարտէզ

Ա.	բաժ.	օր.	Ա. Աբրահամեան
Բ	»	»	Մ. Սիմէոնեան
Գ	»	»	Կ. Յարութիւնեան

Գ.-Քանանեան դպրոց

Ա.	բաժ.	հիմն.	տ. Ծ. Գալստեան
Ա.	»	զուգ.	օր. Հ. Սիմէոնեան
Բ	»	հիմն.	տ. Ծ. Քամարզարեան
Բ	»	զուգ.	օր. Ն. Զոհրաբեան
Բ	»	պատր.	պ. Ս. Կիրակոսեան
Գ	»	հիմն.	օր. Ի. Զոհրաբեան
Գ	»	զուգ.	Տէր-Վ. քհ. Աղանեան
Ա.	դաս.	հիմն.	պ. Պ. Շուքուրեան
Ա.	»	զուգ.	պ. Տ. Աբգարեան
Բ	»	տպ.	Տէր-Գ. քհ. Կիրակոսեան

Կենտրոնական դպրոց

Գ	դաս.	պ.	Ս. Աբգարեան
Դ	»	պ.	Ե. Գալֆեան
Ե	»	պ.	Մ. Կարապետեան
Զ	»	Տէր-Գ.	քհ. Կիրակոսեան

Ա.-Կատարիկեան դպրոց

Բ	դաս.	օր.	Ե. Իսրայէլեան
Գ	»	Տէր-Ե.	քհ. Յովհաննիսեան
Դ	»	պ.	Ալ. Յովհաննիսեան
Ե	»	պ.	Ա. Յարութիւնեան
Զ	»	տ.	Ն. Գերասիմեան

ՍԻՍՄԻՅԻՉՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԱԻԵԼՈՐԴ ՊԱՐԱՊԱԾ ԴԱՍԵՐԸ

Զպարապած դասեր

Աբգարեան	պ.	Ս.	52 դաս	Իսրայէլեան	օր.	Ե.	12 դ.
»	պ.	Տ.	4 »	Կիրակոսեան	Տ.-Գ.	քհ.	15 դ.
Աբրահամեան	օր.	Ա.	52 »	Միրզա	Մահմադ		18 դ.
Աղպնեան	տ.-Վ.	քհ.	18 »	Յարութիւնեան	պ.	Ա.	5 դ.
Գերասիմեան	պ.	Ս.	4 »	Յովհաննիսեան	պ.	Ալ.	67 դ.
»	տ.	Ն.	73 »	Յովհաննիսեան	Տ.-Ե.	քհ.	15 դ.
Գալֆեան	պ.	Ե.	12 »	Յարութիւնեան	օր.	Կ.	47 դ.
Զոհրաբեան	օր.	Ի.	11 »	Շուքուրեան	պ.	Պ.	4 դ.
»	օր.	Ն.	36 »	Սիմէոնեան	օր.	Հ.	19 դ.
Կարապետեան	պ.	Մ.	23 »	»	օր.	Մ.	16 դ.
				Քամարզարեան	տ.	Ծ.	44 դ.

Աւելորդ պարապած դասեր

Աբգարեան	պ.	Ս.	10 դաս	Իսրայէլեան	օր.	Ե.	14 դ.
Գերասիմեան	պ.	Ա.	4 »	Յովհաննիսեան	պ.	Ալ.	11 դ.
»	տ.	Ն.	12+30 »	Քամարզարեան	տ.	Ծ.	3 դ.
Զոհրաբեան	օր.	Ն.	19 »				

Բացակայութեան պատճառը գլխաւորապէս հիւանդութիւնն է եղել, երբեմն նաև՝ այլ յարգելի պատճառներ։

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Եարուն կրկնել ենք, որ դպրոցական աշակերտական միութիւնները, որ իրանց բազմաթիւ տեսակներով ու դաս-

տիարակչական տեսակետից օգտակար նպատակներով՝ գոյութիւն ունին նաև օտարազգի բարեկարգ ու յառաջադէմ դպրոցներում, որոնք են աշակերտութեան համար, որտեղ նոքա հնարաւորութիւն են ստանում մարզելու և կատարելագործելու իրանց հոգեկան ու բարոյական ոյժերը։ Դա է միջոցներից գլխաւորը աշակերտների մէջ ինքնագործունէութիւն, գիտակցականութիւն և ինքնազարգացման ձգտում մտցնելու համար, մանաւանդ գաւառական ինչպես մի միջավայրում, ուր աշակերտը բացի դպր. կրթութիւնից շատ քիչ հրահանգիչ բան է տեսնում իր շրջապատում։ Այդ կարգի համագործակցութիւնն ունի էական ու անփոխարինելի նշանակութիւն։ Խնդիրն ղեկավարութեան շնորհիւ՝ այդ կարգի միութիւնը կը դառնայ ազնուացման ու ինքնազարգացման մի ճշմարիտ աղբիւր։

Դպրոցներիս Աշակերտական միութիւնը իւր անդամավճարների և տուած երեկոյթների արդիւնքների գումարով դպրոցական գրադարանի համար բերել ու կազմել է տուել բազմաթիւ գրքեր. այս էլ իւր տեսակի, սակայն երկրորդական նշանակութիւն ունեցող, օգտակար մի կողմն է։

Բարեկենդանի արձակուրդին Ա.շ. միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուել է մի երեկոյթ-ներկայացում, որ ունեցել է փայլուն յաջողութիւն։ Ուշագրաւ էր այն հանդամանքը, որ հանդէսի ամբողջ ղեկավարութիւնն ու պատրաստութիւնն ստանձնել էին իրանք աշակերտները։ Ուսուցիչները միայն հսկող աչքի դեր էին կատարում։ Քառաձայն երգեցիկ խմբին նոր երգեր էր սովորեցրել ու ղեկավարում էր աշակերտ Ս. Մնացականեանը, երաժշտական խումբը ղեկավարում էր աշ. Ղ. Մարտիրոսեանը. նոյնիսկ Կրիլովի մի քանի առակները ներկայացնելու համար անհրաժեշտ դիմակներն էլ իրանք աշակերտներն էին պատրաստել։ Խաղացուած երեք կատակերգութիւններն էլ ունեցան զգալի յաջողութիւն։ Աշակերտութիւնն ապացուցեց,

որ որոշ չափով ընդունակ է ինքնագործունէութեան ու ինքնակատարելագործման։

Աշակերտական միութեան ղեկավարութիւնն ստանձնելով՝ տ. Ն. Գերասիմեանն երբեմն խօսել է աշակերտներին մատչելի նիւթերի մասին. իրանք աշակերտներն էլ խօսել են երբեմն, ու տեղի է ունեցել յաճախ մտքերի փոխանակութիւն։

Ա.շ. միութեան վերջին տարուայ հաշիւը

ՄՈՒՏՔ	Ղ. — Ս.	ԵԼՔ	Ղ. — Ս.
1902-թվ մնացած	1555 — 72½	Բիւֆէտի, վիճակ. և այլ ծախքեր	396 — 20
Ներկայացումից և վիճակախաղից	810 — 7½	Մանր ծախսեր	15 — 20
Անդամավճարներից	87 — 15	Գրքեր (բերել տուած ու գնած)	1279 — 50
		Դպր. գրադար. գրքեր կազմելու	106 —
		Մնում է կանխիկ	655 — 95
Գումար	2452 — 95	Գումար	2452 — 85

Ա.շ. միութեան երեք տարուայ հաշիւը

(1910—11, 1911—12, 1912—13)

ՄՈՒՏՔ	Ղ. — Ս.	ԵԼՔ	Ղ. — Ս.
Անդամավճարներ	529 — 60	Բիւֆէտի, վիճակախաղի ծախսեր	1044 — 05
Ներկայացում, վիճակախաղ և բիւֆէտ	3464 — 65	Մանր ծախսեր	202 — 20
Նուէրներ	63 —	Գրքեր գնելու վճար.	1715 — 05
		» կազմելու »	440 —
		Մնում է պատրաստ	655 — 95
Գումար	4057 — 25	Գումար	4057 — 25

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Շնորհիւ այն հանդամանքի, որ նախքան անցեալ ուսումնական տարում կազմուած դպրոցական Ներքին կանոնադրութիւնը Թեմական Առաջնորդին հասնելը՝ վերջինս արդէն հրաժարուած էր, Ներքին կանոնադրութիւնը

4361-2002

մնաց չվաւերացուած։ Այս ի նկատի ունենալով՝ դպր. պատուարժան Հոգաբարձութիւնը վճռել է ապագրել ապ այն իբրև նախագիծ՝ նախքան հոգևոր Իշխանութիւնից վաւերացուելը։

Հաստատուն կանոնագրութեան պակասութիւնը միշտ պէտք է պատճառ դառնայ դրութեան անկերպարանութեան, որին ականատես ենք լինում երբեմն։

ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Դպրոցներիս դասարանների լուսաւորութիւնը, ինչպէս նաև օգաւորումը, գոհացուցիչ պիտի համարել։ Դասարանի բովանդակութեան չափերն ի նկատի ունենալով՝ տեսնում ենք որ ընդհանուր առմամբ մէկ աշակերտին 5-6 խ. մետր օդ է ընկնում — անհրաժեշտ չափը, որ պահանջւում է դրպրոցական առողջարանների կողմից։

Ջեռուցումը նոյնպէս գոհացուցիչ է եղել։— Երեք դրպրոցներում էլ գործածուող ջուրը ջրհորի է, որ թէև մեծ չափով կրաքարային լուծուածք ունի, ինչպէս Ջուղայի բոլոր ջրերը, սակայն շատ մաքուր է և ազատ ամեն տեսակի վնասակար փտութիւններից։

Դասարաններն աւելանալու պատճառով՝ այս տարի էլ շինել են տրուած նոր դրասեղան-նստարաններ։ Հին ձևի դրասեղանները միանգամայն հանուած են գործածութիւնից՝ բացառութեամբ մի քանիսի։

Դպրոցներում գործածուող դասագրքերի մեծագոյն մասը բերել է տրուած Կովկասից։ Լոնդոնից բերել են՝ տրուած անգլերէն նոր դասագրքեր, որոնք անցեալ տարիներում գործածուածներից անհամեմատ աւելի լաւ են։ Բոլոր առարկաներն աւանդուել են՝ հայերէն ու անգլերէն լաւագոյն ու նորագոյն դասագրքերով։ Մի քանի առարկաներ միայն հնարաւոր չէ եղել անցնել դասագրքով՝ յարմար դասագիրք չգտնուելու պատճառով։

Բերել են տրուած ֆիզիքական-քաղաքական մեծագիր և պատմական փոքրագիր ընտիր քարտէսներ (լոլորը միասին 22 հատ)։ Սոքա խնամքով պահւում են աշխարհագրական յատուկ դասարանում։ Այս տարի ստացուած է նաև բնագիտութեան ու բնապատմութեան աւանդման համար անհրաժեշտ իրերի մի կոլլեկցիա։ Շնորհիւ այս նիւթերի ու պարագաների՝ հնարաւոր է եղել որոշ առարկաների դասաւանդման մէջ մտցնել անհրաժեշտ մի քանի բարեփոխութիւններ։

Մեծ. պ. Մարտ. Եսայեանը 50 ռուբլի յատկացրել է, որ բերել տրուի մանկավարժական ստերէոսկոպ Գ.-Քանանեան Մանկապարտէզի համար։ Պատուէրը վաղուց տրուած է։ Ստերէոսկոպներն ու կոլլեկցիաները հաւանականաբար շատ շուտով կ'ստացուեն*)։ Մանկավարժական ստերէոսկոպի դերը նոյնպէս շատ մեծ է։ Առարկայական ուսուցման համար նա ևս ունի էական նշանակութիւն։—Պարտք եմ համարում յայտնել խորին շնորհակալութիւնս մեծ. պ. Մարտ. Եսայեանին՝ իր նուիրատուութեան համար։

Վերջապէս, քանաւոր ուսուցումն ընդհանրապէս շատ քիչ արժէք ունի։ Դպրոցը մի աշխատանոց, մի մեղուանոց պիտի լինի, ուր եռանդուն պիտի աշխատեն, դիտեն ու ըստեղծագործեն երեխաները։ Աշակերտը պասիւ իւրացնողի դերում չպիտի լինի. նա ինքը պիտի դիտէ, հետաքննէ ու յօրինէ։ Այս ուղղութեանն ենք միշտ հետևել և դէպի այն ձգտել հնարաւոր բոլոր միջոցներով։

ԱՇԱԿԵՐՏ-ՈՒՍԻՆԵՐԻ ԹԻՒԸ

Տարուայ սկզբին երեք դպրոցների ու մանկապարտէզի աշակերտների թիւն եղել է 535, յունուարին՝ 543, իսկ յունիս 1-ին՝ 555։ Այս տարի նորեկների արձանագրութեան մատեանում ցուցակագրուած են 110 հոգի։ Ուրախ ենք, որ տարեցտարի աշակերտների թիւն աւելանում է։— Գ.-Քանանեան մանկապարտէզի տաների ընդհանուր թիւն է 138. Գ.-

*) Դաճօր. Արդէն ստացուած են։
Ա. Դ.

Քանանեան դպրոցինը՝ 317, Կենտր. դպրոցինը՝ 41, իսկ Ս.-Կատ. դպրոցինը՝ 59։ Երեք դպրոցների 417 սաներից երթևեկ են 387 (92,75%), իսկ գիշերօթիկ՝ 30 (7,25%)։ Ջուզայեցի են 341 հոգի (81,75%), օտար վայրերից են 76 հոգի (18,25%)։ Երեք դպրոցների ու մանկապարտէզի տղաների ընդհանուր թիւն է 264, իսկ աղջիկներինը՝ 291։

ՀԱՄԱԶԳԵՍՏ

Զնայած յաճախակի տրուող յորդորներին ու պատուէրներին՝ կան մինչև այժմ աշակերտներ ու աշակերտուհիներ, որ համազգեստ չունին։ Ցաւալին այն է, որ դոքա ընդհանրապէս չունևոր մարդկանց զաւակներ չեն։ Երեք դպրոցների աշակերտ-ուհիներից համազգեստ ունին 367 հոգի (88%), չունին՝ 50 (12%)։ Անցեալ տարուայ համեմատութեամբ՝ այս տարի քչերն են, որ համազգեստ չունին (անցեալ տարի՝ 90 հոգի)։

Ամենից կանոնաւոր հագնում են Ս.-Կատ. դպրոցի աշակերտուհիները, յետոյ Կենտր. դպրոցի աշակերտները. ամենից աւելի անմաքուր ու թափթփուած հագնում են Գ.-Քանանեան դպրոցի սաները, որոնց վրայ, իբրև փոքրիկների, ծնողները, երևում է, չեն ուզում յուրջ ուշադրութիւն դարձրած լինել՝ հակառակ տրուած պատուէրներին։

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Երեք դպրոցների աշկերտ-ուհիներին այս տարի ևս քննել է Պողոսխանեան բուժատան բժշկապետ դոկտ. Մ. Ռանդոլֆ։ Երեխաների առողջ. ընդհ. վիճակն ընդհանրապէս գոհացուցիչ պիտի համարել։ Ահա քննութ. արդիւնքը.—

		ուժեղ առողջ.	միջակ առողջ.	թոյլ առողջ.
Գ.-Քան. դպր.	268	(84,75%)	48 (15%)	1 (0,25%)
Կենտր. »	31	(75,5%)	10 (24,5%)	—
Ս.-Կատ. »	50	(84,75%)	9 (15,25%)	—
Գումար	349	(83,75%),	67 (16%)	1 (0,25%)

Հիւանդացել են

Գ.-Քանանեան դպր.	222	հոգի	70%
Կենտր. »	29	»	70,75%
Ս.-Կատար. »	22	»	37,25%
Գումար	273	հոգի	65,5%

Հիւանդութեան քանի՝ դէպք է եղել
(ամենից իրար վրայ քանի՝ անգամ են հիւանդացել)

Գ.-Քանանեան դպր.	433	դէպք
Կենտրոնական »	30	»
Ս.-Կատարինեան »	34	»
Գումար	497	դէպք

Նոյեմբեր ու դեկտ. ամիսներին Զուզայում խիստ տարածուած էր կապոյտ հազ հիւանդութիւնը, որի պատճառով դպրոցներիս Կարգութիւնն սահմանուած եղաւ Մանկապարտէզում և Գ.-Քան. դպրոցի Ա. և Բ բաժանմունքներում դասերը դադարեցնել 2 շաբաթով։

Օրական միջին հաշուով քանի՝ ժամ են քնում։

Գ.-Քանանեան դպր.	սաները	8,5	ժամ
Կենտր.	» »	7,5	»
Ս.-Կատար.	» »	7,5	»

Քանիսի ծաղիկն է պատուաստած

	պատուաստած		չպատուաստած	
Գ.-Քան. դպր.	280 (88,5%)	աշ.	37	(11,5%) աշ.
Կենտր. »	36 (87,75%)	»	5	(12,25%) »
Ս.-Կատ. »	52 (88,25%)	»	7	(11,75%) «
Գումար	368 (88,25%)		49	(11,75%)

Ծաղիկ չպատուաստածները տարիներ առաջ են ընդունուած։ Այժմ դպրոց ընդունուողները խնդրագրի ու ծնունդեան վկայագրերի հետ միասին ներկայացնում են նաև ծաղկի պատուաստման վկայագիր։

Դպրոցական դեղատուն այս տարի ևս յանձնուած է եղել օր. Մ. Սիմէոնեանին։ Թեթև վիրաւորումների ժամանակ

նախնական օգնութեան համար դպրոցներիս սաները յաճախ թեթև դարմանում են ստացել։

Յայտնում եմ խորին շնորհակալութիւն յարգելի դոքտ. Ռանդոլֆին՝ իւր յանձնառութեան և կատարած աշխատանքի համար։

ԱՇԱԿԵՐՏ—ՈՒՀԻՆԵՐԻ ՆԻՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

	հարուստի դասակ են	ունևորի (միջակ)	չքաւորի	աղքատի
Գ.-Քան. դպր.	10 (3,25%)	114 (36%)	84 (26,5%)	109 (34,25%)
Կենտր. »	— —	25 (61%)	12 (29,5%)	4 (9,75%)
Ս. Կատ. »	4 (6,75%)	43 (57,5%)	19 (32,25%)	2 (3,5%)
Գումար	14 (3,5%)	173 (41,5%)	115 (27,5%)	115 (27,5%)

Ծնողների զբաղումների համաձայն աշակերտ-ուհիները բաժանուում են

		Գ.-Քան. դ	Կենտր. դ.	Ս.-Կատ. դ.	գումար
Քահանայի	դասակ	12 (3,75%)	2 (5%)	8 (13,5%)	22 (5,5%)
Ուսուցչի	»	8 (2,5%)	—	4 (6,75%)	12 (3%)
Մանրավաճառի	»	20 (6,25%)	1 (2,5%)	4 (6,75%)	25 (6%)
Արհեստաւորի	»	83 (26%)	13 (31,75%)	16 (27,25%)	112 (26,75%)
Վաճառականի	»	18 (5,75%)	3 (7,25%)	5 (8,5%)	26 (6,25%)
Գործակատարի	»	26 (8,5%)	6 (14,5%)	6 (10,25%)	38 (9%)
Երկրագործի	»	7 (2,25%)	6 (14,5%)	—	13 (3,25%)
Մշակի	»	25 (8,25%)	1 (2,5%)	2 (3,25%)	28 (6,75%)
Ծառայի	»	61 (19%)	2 (5%)	2 (3,25%)	65 (15,5%)
Գինեվաճառի	»	9 (2,75%)	—	2 (3,25%)	11 (2,75%)
Անգործ և այլն	»	48 (15%)	7 (17%)	10 (17,25%)	65 (15,5%)
Գումար		317	41	59	417

Զրիաբար զգեստ ստանում են

Գ.-Քան. դպր. 160 հոգի (50,5 %)
Կենտր. » 17 » (41,5 %)
Ս.-Կատար. » 16 » (27 %)

Գումար՝ 193 հոգի (46,75 %)

Զրիաբար դասական պիտոյք են ստանում

Գ.-Քան. դպրոց. 184 հոգի (58,25 %)
Կենտր. » 20 » (49 %)
Ս.-Կատ. » 16 » (27 %)

Գումար 220 հոգի 69.5 %

Դպրոցներիս չքաւոր աշակերտ-ուհիներին ձրիաբար զգեստ և աշակերտներին դասական պիտոյքներ է մատակարարել «Աղքատախնամ» յանձնախումբը, իսկ աշակերտուհիներին դասագրքեր և այլ դասական պիտոյքներ մատակարարել է Զատրայի Կանանց բարեգործական Ընկերութիւնը։ Յայտնում եմ խորին շնորհակալութիւն յիշեալ Յանձնախմբին և Ընկերութեանը։

Տնային աշխատանք կատարում են

Գ.-Քան. դպր. սաներից 253 հոգի (79,75%)
Կենտր. » » 25 » (61 %)
Ս.-Կատ. » » 59 » (100%)

Գումար 337 » (79,25%)

Դպրոցներիս աշակերտութեան մեծագոյն մասը տանու աշխատանք կատարում է։ Սա, եթէ կատարուի բաւարար չափով, պէտք է նոյնիսկ գովելի համարել. սակայն մեծ չափով կատարուելը պատճառ է դառնում, որ երեխաները ժամանակ չեն ունենում դասերը կանոնաւոր պատրաստելու։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ներկայ 1912—13 ուս. տարեշրջանում դպրոցներիս Մանկվ. խորհուրդն ունեցել է 26 նիստ։ Ժողովների էական զբաղումներն եղել են դիդակտիքական-մեթոդական խնդիրներ՝ սերտիւ կապուած փորձնական դասերի քննութեանց հետ,— դասագրքերի ընտրութիւն, ընթերցանութեան գործի կարգադրում, դպրոցական հանդէսների գործի կարգաւորում, դասատարակութեան ու դիսցիպլինայի վերաբերող խնդիրներ. աշակերտների տարեկան փոխադրութեանց որոշում, ընթացիկ խնդիրների կարգադրում և այլն և այլն։

Մանկվ. Խորհուրդն ուսումնական—կրթական, դասատարակչական, մանկավարժական խնդիրներում գործել է սերտ համերաշխութեամբ։ Ինչպէս միշտ՝ Մանկվ. ժողովը դպրոցական-կրթական գործի վերաբերմամբ ունեցել է անսահմանափակ լիազորութիւն։

ԾՐԱԳԻՐ ԵՒ ԻՐ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

Այս տարի հնարաւոր է եղել դասաւանդել ծրագրում յիշուած բոլոր առարկաները, այդ թւում նաև տանին տնտեսութիւն, մարմնամարզութիւն և ձայնագրութիւն, որ անցեալ տարի հնարաւոր չէր եղել աւանդել։

Ահա իւրաքանչիւր դասարանում աւանդուող առարկաների ցանկը.-

Ա. բաժանմունք

1. Կրօնագիտութիւն
2. Հայերէն
3. Թուաբանութիւն
4. Իրաւունք
5. Նկարչութիւն
6. Ձեռագործ (աղջ.)
7. Երգեցողութիւն
8. Մարմնամարզ.
9. Գեղագրութիւն

Բ բաժանմունք

1. Կրօնագիտութիւն
2. Հայերէն
3. Թուաբանութիւն
4. Իրաւունք
5. Անգլերէն
6. Նկարչութիւն
7. Երգեցողութիւն
8. Գեղագրութիւն
9. Ձեռագործ (աղջ.)
10. Մարմնամարզ.

Գ բաժանմունք

1. Կրօնագիտութիւն
2. Հայերէն
3. Անգլերէն
4. Պարսկերէն (տղ.)
5. Թուաբանութիւն
6. Իրաւունք
7. Հայրենագիտութիւն
8. Նկարչութիւն
9. Ձեռագործ (աղջ.)
10. Երգեցողութիւն
11. Գեղագրութիւն

Ա. դասարան

1. Կրօնագիտութիւն
2. Հայոց լեզու
3. Հայ. պատմ
4. Անգլերէն
5. Պարսկերէն (տղ.)
6. Թուաբանութիւն
7. Ընդհ. աշխարհագր.
8. Երկրաչափ. ձեռագիտ.
9. Նկարչութիւն
10. Բնակ. պատմ.
11. Ձեռագործ (աղջ.)
12. Ձայնագրութիւն
13. Գեղագրութիւն

Բ դասարան

1. Կրօնագիտութիւն
2. Հայոց լեզու
3. Հայոց պատմութ.
4. Անգլերէն
5. Թուաբանութիւն
6. Պարսկերէն (տղ.)
7. Բնապատմութիւն
8. Աշխարհագրութիւն
9. Երկրաչափ. ձեռագ.
10. Ձայնագրութիւն
11. Ձեռագործ (աղջ.)
12. Նկարչութիւն

Գ դասարան

1. Կրօնագիտութիւն
2. Հայոց լեզու
3. Հայոց պատմութ.
4. Անգլերէն
5. Թուաբանութիւն
6. Պարսկերէն (աղ.)
7. Բնական պատմ.
8. Աշխարհագրութիւն
9. Ընդհ. պատմութիւն
10. Ռուս. լեզու (տղ.)
11. Նկարչութիւն
12. Ձայնագրութիւն
13. Ձեռագործ և կարուձև (աղջ.)

Դ դասարան

1. Կրօն և եկեղ. պատմ.
2. Հայ. լեզու
3. » պատմութիւն
4. Անգլերէն
5. Թուաբանութիւն
6. Ալգեբրա
7. Երկրաչափութիւն
8. Պարսկերէն (տղ.)
9. Աշխարհագրութիւն
10. Ընդհ. պատմ.
11. Ռուսերէն (տղ.)
12. Ֆիզիկա
13. Ձեռագործ և կարուձև (աղջ.)

Ե Դասարան

1. Հայ. լեզու
2. Հայ. պատմ.
3. Անգլերէն
4. Թուաբանութիւն
5. Անգլ. և Հնդկ. աշխ.
6. Ալգեբրա
7. Երկրաչափութիւն
8. Պարսկերէն (տղ.)
9. Ընդհ. պատմ.
10. Կարուձև և ձեռագործ (աղջ.)
11. Ռուսերէն (տղ.)
12. Բան. տեսութիւն
13. Ֆիզիկա
14. Անգլ. պատմութիւն

Զ դասարան

1. Հայոց լեզու
2. Հայոց գրակ. պատմ.
3. Անգլերէն
4. Ընդհ. պատմ.
5. Պարսկերէն (տղ.)
6. Ալգեբրա
7. Երկրաչափութիւն
8. Ռուսերէն (տղ.)
9. Մանկավարժութիւն
10. Քիմիա
11. Ֆիզիկա
12. Տոմարակալութիւն (տղ.)
13. Առան. տնտեսութիւն (աղջ.)
14. Կարուձև և ձեռագործ (աղջ.)

Բացի այս առարկաներից՝ տղայոց Բ—Զ դասարաններն ունեցել են մարմնամարզութեան, իսկ տղայոց և աղջկանց Ա.—Զ դ. աշակերտուհիները՝ խմբական քառաձայն երգեցողութեան դասեր։

Անցեալ տարեշրջանում Մանկվ. Խորհուրդն որոշել էր Ֆրանսերէնը դարձնել ոչ պարտադիր առարկայ և նրա փոխարէն աւանդել ռուսերէն։ Ներկայ ուս. տ. Մանկվ. Խորհուրդը՝ մի շարք տեսական և գործնական նկատումներով՝ վճռեց ռուսերէնն աւանդել իբրև պարտադիր առարկայ, իսկ Ֆրանսերէնը հանել ծրագրից, որովհետև մէկ դպրոցում չորս օտար լեզուի աւանդումը պիտի համարել միանգամայն հակամանկավարժական ու վնասակար։

Այժմ թէպէտ՝ տեղական պայմաններն ի նկատի առնելով՝ աւանդւում է երեք օտար լեզու, սակայն դա ևս մանկվ. տեսակէտից պիտի համարել անթոյլատրելի։ Պարսկաստանի 4-6-դասեան գրեթէ բոլոր դպրոցները նոյն վիճակն ունին։

Առարկաների մեծագոյն մասը հնարաւոր է եղել անցնել ծրագրում որոշուած չափով. մի քանի առարկաներ միայն հնարաւոր չէ եղել անցնել անհրաժեշտ չափով ու ծաւալով՝ դասատուների մէջ և դասատուներից դուրս եղած մի շարք պատճառներով։

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Ներկայ ուս. տարում գումարուել է երկու ծնողական ժողով։ Առաջին ժողովին դոկտ. Մ. Ռանդոլֆ խօսել է կապոյտ հագի մասին ու տուել է առողջապահական պատուէրներ։ Երկրորդ ժողովին խօսել է Ս. Գերասիմեան սովորութիւնների ու նրանց նշանակութեան մասին։

Ծնողական ժողովներին գլխաւորապէս տիկիններ ու օրիորդներ են ներկայ եղել, որոնք բաւականացել են միայն լուռ ունկնդրութեամբ։

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Մանկվ. խորհուրդն ընդունելով, որ փորձնական դասերը ուսուցման եղանակների մշակման և վերաբերումի ու դաստիարակչական միջոցների միակերպութեան տեսակէտից մեծ նշանակութիւն ունին՝ այս տարի ևս որոշեց է ունենալ փորձնական դասեր, որոնք մեծ մասամբ եղել են ստորին դասարաններում։ Շատ օգտակար են եղել փորձնական դասերի քննադատութիւնները, որոնք դիդաքտիքական ու մեթոդական խնդիրների լուսաբանութեան տեսակէտից ուշադրութիւն։

Փորձնական դասեր տուել են՝

1. պ. Տ. Ալբարեան — Աշխարհագրութիւն Ա. դ.
2. Տէր-Վ. Ք. Ադանեան — Հայերէն Գ. բ.
3. օր. Ի. Զոհրաբեան — Իրազնութիւն Գ. բ.
4. տ. Ծ. Գալստեան — Հայերէն Ա. բ.
5. պ. Մ. Կարապետեան — Անգլերէն Դ. դ.
6. պ. Ս. Ալբարեան — Անգլերէն Բ. դ.
7. օր. Հ. Սիմէոնեան — Թուաբանութիւն Ա. բ.
8. օր. Մ. Սիմէոնեան — Ֆրէոբ. Բ պարգև Մանկապ.
9. օր. Ե. Իսրայէլեան — Թուաբանութիւն Ա. դ.

Փորձական դասեր տուել են նաև այս տարուայ ընթացաւարտները.

1. Ղ. Մարտիրոսեան — Հայերէն Բ. բ. և Անգլերէն Բ. բ.
2. Ս. Մնացականեան — Հայերէն Ա. բ. և Իրազն. Գ. բ.
3. Ա. Ստեփաննոսեան — Կրոն Բ. բ. և Հայերէն Ա. բ.
4. Ս. Մարգարեան — Թուաբան. Ա. բ. և Հայերէն Ա. բ.
5. Ե. Կիրակոսեան — Իրազն. Ա. բ. և Հայերէն Գ. բ.
6. Մ. Վարդանեան — Իրազն. Ա. բ. և Թուաբ. Ա. բ.

Ընթացաւարտներն իրանց տուած փորձնական դասերով կարողացել են ապացուցել, որ բաւարար չափով ըմբռնել են դաստիարակութեան և ուսուցման գործի

էութիւնն ընդհանուր առմամբ։— Փորձն. դասերը տրուել են մանկավարժութեան դասատուի հսկողութեան ներքոյ։ Դասերից յետոյ տեղի են ունեցել քննադատութիւններ։

ԱՇԱԿԵՐՏ—ՈՒՀԻՆԵՐԻ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Ներկայ ուս. տարում աշակերտ—ուհիների կրթական ընդհանուր վիճակն աւելի բարձր է եղել, քան անցեալ տարում։ Եթէ ուզենք համեմատութիւն անել, պիտի տեսնենք, որ անցեալ տարում աշակերտների ընդհ. յառաջադիմութեան միջին թիւը 3,1 է եղել, իսկ այս տարի՝ 3,3 կամ, աւելի ճիշտ, մինչ անցեալ տարի դպրոցների ընդհ. յառաջադիմութիւնը եղել է բաւարարից շատ քիչ պակաս, այս տարի եղել է լիովին բաւարար։ Ի նկատի ունենալով մանաւանդ այն, որ ուսուցիչներից շատերը շատ խստապահանջ են իրանց գնահատութեան մէջ՝ այս միջին թիւը պիտի համարել գոհացուցիչ։ Սակայն թող թուերը խօսեն աւելի որոշ կերպով։

Քանիսի տարեկան յառաջադ. նիշերի միջին թիւն է

		լաւ	միջակ	թոյլ
Գ.-Քան.	դպր.	62 (19,5%)	144 (45,5%)	111 (35%)
Կենտր.	»	23 (56%)	16 (39%)	2 (5%)
Ս.-Կատ.	»	12 (20,25%)	39 (66,25%)	8 (13,5%)
Գումար		97 (23,25%)	199 (47,75%)	121 (29%)

Մէկ աշակերտի միջին հաշուով ի՞նչ նիշեր են ընկնում

				քանի՞ լաւ	քանի՞ միջակ	քանի՞ թոյլ
Գ.-Քան.	դպր.	մէկ	աշ.	2	$3^3/_4$	$3^1/_4$
Կենտր.	»	»	»	$8^1/_2$	$3^1/_2$	1
Ս.-Կատար.	»	»	»	$2^3/_4$	$6^1/_2$	$2^1/_4$
միջին թուով				3	4	3

Սոյնպիսի վիճակագրութեամբ գնահատուած են նաև աշակերտ-ուհիների ջանասիրութիւնը, յիշողութիւնն և ուշադրութիւնը, որոնք թողնում ենք միայն Ընդհանուր վիճակագրության մէջ՝ խուսափելով մանրամասնութեանց մէջ մտանելով երկարելուց։

Քանի՞երորդ տարին են նոյն դասարանում

	Ա. տարի	Բ տարի	Գ տարի
Գ.-Քան. դ.	185 (58,5%)	115 (36,75%)	17 (5,25%)
Կենտր. դ.	40 (97%)	1 (3%)	—
Ս.-Կատ. դ.	47 (79,75%)	11 (18,5%	1 (1,75%)
	272 (65,25%)	127 (30,25%)	18 (4,5%)

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տարեկան փոխադրութեանց համար՝ իւրաքանչիւր դասարանի համեմատ որոշուել են նորմեր, որոնք ընդհանրապէս եղել են խիստ. մասամբ էլ այդ է պատճառը, որ մնացողները մեծ տոկոս են կազմում։— Դասարանում պահելը, մեր կարծիքով, մեր իրականութեան մէջ մի անխուսափելի չարիք է. սակայն անխտիր փոխադրելն աւելի ևս վնասակար է։ Ամերիկեան շատ դպրոցներ այդ չարիքի առաջն առնում են իւրաքանչիւր դասարան 3-4 բաժանմունքի բաժանելով և տարուայ մէջ 3-4 անգամ փոխադրութիւն կատարելով։ Մենք այդ հնարաւորութիւնը չունինք։ Այս չարիքի առաջն մասամբ առնելու համար՝ նպատակայարմար է դատուած Գ.-Քան. դպրոցի դասարաններում մնացողներին հաւաքել հիմնականներում, իսկ նախորդ դասարանից փոխադրուողներին զետեղել զուգընթացներում, որպէսզի միևնոյն դասարաններում Ա. և Բ տարուայ աշակերտների զուգընթաց սովորելու անտեղութիւնների առաջն մասամբ առնուի։

Սա մի փորձ է, որ դեռևս լուրջ հետաքննութեան պէտք ունի։

		Փոխադրում են		մնում են	
Գ.-Քան.	դպր.	160	50,5%	146	46%
Կենտր.	»	33	80,5%	4	9,75%
Ս.-Կատ.	»	33	56,25%	14	23,75%
		226	54,25%	164	39,25%

		վերաքննելի		արձակում են	
Գ.-Քան.	դպր.	6	2%	5	1,5%
Կենտր.	»	4	9,75%	—	—
Ս.-Կատ.	»	12	20%	—	—
		22	5,25%	5	1,25%

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Այս տարի աշակերտների բացակայութիւնն աւելի շատ է եղել, քան անցեալ տարի։ Ամենից շատ բացակայել են Գ.-Քանանեան դպրոցի աշակերտ-ուհիները՝ փոքրութեան պատճառով, յետոյ Ս.-Կատ. դպրոցի, իսկ ամենից քիչ Կենտր. դպրոցի աշակերտները։ Բացակայութիւններն, ինչպէս յայտնի է, մեծ չափով ազդում են յառաջադիմութեան վրայ՝ դանդաղեցնելով նրա ընթացքը։

		Բացակայութեան ընդհ. թիւը		Մէկ աշակերտ միջին հաշուով բացակայել է քանի դասի
Գ.-Քան.	դպր.	26919	դաս.	85 դասի
Կենտր.	»	1490	»	36,25 »
Ս.-Կատ.	»	4031	»	68,25 »
		32440	դաս	78 դասի

Անցեալ տարի մէկ աշակերտ միջին թուով բացակայել էր 73 դասի, իսկ այս տարի 78—մի թիւ, որ շատ մեծ է։ Ինչպէս քիչ առաջ յիշեցինք, բացակայութեանց շատութեան նպաստել է կապոյտ հազը, որ ամիսներ տևեց. բայց պէտք է խոստովանել, որ ծնողների ու երեխաների անփութութիւնն՝ ուրիշ պատճառների հետ միասին՝ աննշան դեր չեն կատարել։

ԴՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Դպրոցական գրադարանի գրքերի ընդհանուր թիւն է 1284։ Վերջին երեք տարիներում Ս.Հ. միութեան հաշուով բերել է արուած 231 կտոր գիրք։ Դերապատիւ Ս.Լվա-

տեան արքեպիսկոպոսից շնորհակալութեամբ ստացուած է 12 կտոր։— Գրքերից 284 ը անգլերէն է, 112-ը ռուսերէն, իսկ 33-ը ֆրանսերէն։

Վերջին 3 տարում «Ս.Հ. միութեան» հաշուով կազմել է արուած 548 կտոր գիրք։ Գ.-Քան. դպրոցի Գ. ը. և Ս. դասարանի աշակերտ-ուհիներից նուէր է ստացուած յօգուտ գրադարանի 52 զուտ, որն ևս յատկացուած է գրքեր կազմելու։

Երկարատև գործածութիւնից միանգամայն քրքրուել և անգործածելի է դարձել 20 կտոր գիրք։

Ընթերցանութիւն։— Այս տարի էլ տնային ընթերցանութեամբ պարապել են Գ ը.—Զ դ. բոլոր աշակերտ-ուհիներն առանց բացառութեան։ Իւրաքանչիւր դասարանի համար կազմուած է եղել գրքերի ցուցակ, որի համեմատ և դասարակի հսկողութեամբ են կարդացել տանները։ Ինքնուրոյն ընթերցանութիւնը, ինչպէս թուերն էլ ցոյց են տալիս, երբէք չէ խանգարում դասեր պատրաստելուն. նկատուած է, որ դպրոցում ամենայաջող աշակերտներն ամենից աւելի են ինքնուրոյն ընթերցանութեամբ պարապում։

Մէկ աշակ. քանի՛ գիրք է կարդացել (միջին թուով)

Գ.-Քանանեան	դպր. (Գ ը. և Ս. դ.)	14	կտոր
Ս.-Կատարինեան	»	15,75	»
Կենտրոնական	»	20	»
	միջին թուով՝	16	կտոր

Քանի կտոր գիրք է կարդացել.

Գ.-Քանանեան	դպր.	2260	կտոր
Կենտրոնական	»	808	»
Ս.-Կատարինեան	»	929	»
Գումար		3997	կտոր

Անցեալ տարի մէկ աշակերտ կարդացել էր միջին թուով 10 գիրք, այս տարի՝ 16։ Անցեալ տարի կարդացուել էր 2116 գիրք, իսկ այս տարի՝ 3997 գիրք։

ՁԱՅՆԱԿ. ՈՒ ԴՈՐԾԻԱԿ. ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Այս տարի ևս դպրոցներս ունեցել են երգեցիկ ու երաժշտական խմբեր։

Երգեցիկ խումբը, որ մօտ 120 հոգուց է բաղկացած եղել, սովորել և դպրոցական զանազան հանդէսների ժամանակ երգել է բազմաձայն երգեր՝ թէ օտարազգի և թէ հայ նշանաւոր կոմպոզիտորների երգերից (Ռուբինշտէյն, Չայկովսկի, Վերստովսկի, Եկմալեան, Կոմիտաս վարդ. և այլն) հայկական և մեծ մասամբ Եւրոպական երգեր։ Ըստ սովորութեան երգեցիկ քառաձայն խումբը կիւրակէ և տօն օրերին երգել է Ս. Ամենափրկիչ վանքի մայր տաճարում և որոշ տօն օրերի թաղական մի քանի եկեղեցիներում։

Երգեցիկ խումբը ղեկավարել է Ա. Գերասիմեան։

Երաժշտական խումբն այս տարի աւելի ևս մեծացել է շնորհիւ այն հանգամանքի, որ մեծարգոյ եղբարք Մ. և Մ. Եսայեանները 250 թուման չափ մի գումար յատկացնելով՝ դպր. երաժշտական խմբի համար բերել են տուել 15 պղնձեայ ու եբենեայ նուագարաններ՝ իրանց զանազան պարագաներով։ Պարտք եմ համարում դպրոցներիս Ուս. Վարչութեան կողմից խորին շնորհակալութիւն յայտնել մեծարգոյ եղբ. Մ. և Մ. Եսայեաններին։ Շնորհակալութիւն նաև գոկտ. Մ. Ռանդոլֆին, որի յատկացրած 10 թուման նուագախմբի համար գնուաւծէ մի մեծ թմբուկ։

Այժմ երաժշտական խումբը կազմուած է 24 նուագարանից։

Թէ երգեցիկ և թէ երաժշտ. խումբը, — որը նոյնպէս յաճախ նուագել է Եւրոպակ. երաժիշտների դիւրին ու լաւագոյն գործերից, — ամեն ուսումնական տարուայ սկզբում գրեթէ նորից է սկսում վերակազմուել, որովհետև մի կողմից ձայները փոխուած, պակասած, իսկ միւս կողմից նուագողները հեռացած ու ցրուած են լինում։

Դպրոցական նուագախումբը ղեկավարել է պ. Մ. Կարապետեան։

ՍՊՈՐՏ ԵՒ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Մանկավարժ. Խորհուրդը բարձր գնահատելով ֆիզիքական կրթութեան նշանակութիւնը՝ հնարաւոր չափով ուշք է դարձրել թէ խաղերի և թէ մարմնամարզութեան վրայ, որոնք ոչ միայն ֆիզիքականի, այլ և հոգեկանի վրայ ունին կազդուրիչ ու օգտակար ներգործութիւն։

Ապրիլ 19-ին Մանկվ. Խորհրդի նախաձեռնութեամբ տեղիս սպորտսմենների խաղատեղում կատարուեց աշակերտական սպորտ։ Խաղացուեցին 10-ից աւելի զուարճալի ու մարդիչ խաղեր։ Խաղերի մէջ յաղթանակողների համար պատրաստուած էին զանազան արժէքաւոր նուէրներ, որոնց գնման համար պէտք եղած գումարը (15 թ.) յատկացրել էր պ. Մայիլ Եսայեան։

Այս տարի հնարաւոր եղաւ ունենալ մարմնամարզութեան դասեր ևս, որոնց կրթիչ ու նրբացնող ազդեցութիւնը դժուար չէ գէթ փոքր չափով նկատել կենտր. դպրոցի աշակերտների թէ ընդհանուր կայտառութեան և թէ շարժումների համեմատաբար նրբութեան մէջ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
և
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Ա.) Դպրոցներիս ուսուցչ. կազմն ու աշակերտութիւնը Գ.-Քանանեան դպրոցի մեծանուն ու անմահ բարերար Գէորգ Քանանեանի յիշատակը յարգելու համար ամբողջ կազմով ներկայ է եղել Ս.-Գէորգ զօրավարի տօնին մատուցուող Պատարագին, որից յետոյ կատարուել է հոգեհանգստեան կարգ։

Բ.) Դպրոցներիս ուսուցչ. կազմն ու Ս.-Կատ. դպրոցի աշակերտուհիները Ս.-Կատ. օր դպրոցի հրախտաւոր հիմնա-

դիր ու բարերար հանգուցեալ Մ. Յորդանանեանի յիշատակը յարգելու համար՝ ներկայ է եղել «Քառասուն մանկանց» տօնին Ս. Կատարինեան կուսանաց մենաստանի մատուռում մատուցուող Ս. պատարագին ու հոգեհանգստեան արարողութեան։

Գ) Դպր. ուսուցչ. կազմն ու աշակերտութիւնը ներկայ են եղել Կենտր. ու Արհեստագիտական դպրոցների մեծանուն բարերար Ա.ըգարեանց տօնի առթիւ Ս. Աստուածածին եկեղեցում մատուցուող Ս. պատարագին և հոգեհանգստեան արարողութեան։

Այն ուս. տարեշրջանում դպր. Մանկվ. Խորհրդի նախաձեռնութեամբ կատարուել են հետևեալ հանդէսներն ու ներկայացումները։

Ա) Հայոց գրերի գիւտի 1500-ամեայ եւ տպագրութեան սկզբնաւորութեան 400-ամեայ յոբելեանի առթիւ կատարուել է շքեղ երեկոյթ՝ նախաձեռնութեամբ Մանկվ. խորհրդի և մասնակցութեամբ միւս հաստատութիւնների։ Օրուայ առթիւ խօսել են պ. Ա. Գերասիմեան և պ. Ա.լ. Յովհաննիսեան։ Եղել են երգեր, արտասանութիւններ, երաժշտութիւն և այլն։

Բ) Նոր-տարուայ երեկոյթ, որ աչքի ընկաւ իւր խնամկոտ պատրաստութեամբ և ճոխ բովանդակութեամբ և ունեցաւ գովելի յաջողութիւն։ Առանձնապէս ուշագրաւ էր այն, որ Ե դասարանի աշակերտ-ուհիները շատ յաջող կերպով կարողացան խաղալ 2 արարուածով ընդարձակ մի կատակերգութիւն անգլերէն լեզուով։

Նոր-տարուայ տօնի առթիւ դպրոցներիս աշակերտութեան բաժանուած է 360 կտոր գիրք՝ 408 դրան արժողութեամբ։

Գ) Բարեկենդանի ներկայացում—հանդէսի պատրաստութիւնը ստանձնել էր դպրոցներիս Աշակ. միութիւնը, որ իր ուշադիր ու լուրջ վերաբերմունքի շնորհիւ կարողացաւ

հանդէս-ներկայացումը դարձնել հետաքրքրական բովանդակութեամբ և հաճելի իր կազմակերպութեամբ։

Դ) Ծառատնկութեան եւ գարնան տօն այս տարի ևս հնարաւոր եղաւ կատարել։ Դպրոցական տօների մէջ ամենից նշանակալիցն ու հաճելին պէտք է համարել այս։ Հրճուանքի մի անսպառ աղբիւր եղաւ այս տօնը ամբողջ աշակերտութեան համար։ Հանդիսակատարութիւնն աւելի շքեղ ու բովանդակալից էր, քան անցեալ տարի։

Ե) Ներկայացում յօգուտ դպրոցի։ Ապրիլ 18-ին ուսուցչ. խմբի նախաձեռնութեամբ ու սիրողների օժանդակութեամբ խաղացուել է Շիրվանզադէի «Եւգինէ»ն։ Ստացուել է մօտ 50 թուման արդիւնք։

Զ) Ապրիլ 19-ին տեղի է ունեցել Աշակերտական ապոrs, որ անցել է յաջող և ունեցել է օգտակար ազդեցութիւն։

Է) Մարտ 30-ին կատարուել է հանդէս ի յիշատակ և ի պատիւ Ազգ. դպրոցների բարեարարների։ Օրուայ առթիւ ուսուցիչներից խօսել են երեք հոգի։

Ը) Տարեվերջի ակտ սոյն հանդէսն, ուր պիտի կարդացուեն դպրոցներիս ուսումնական ու տնտեսական վիճակների տեղեկագիրները, պէտք է լինին երգեր, երաժշտութիւն, վկայականների բաշխում և այլն։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Զեւական ու հրապարակական քննութիւններին դէմ լինելով՝ ունեցել ենք սակայն դասարանական հարցաքննութիւններ՝ դասարաններում աւարտուող առարկաներից. այս հարցաքննութիւնները երբէք արտասովոր ու ճնշիչ բնոյթ չունենալով՝ յուի ազդեցութիւն չեն ունեցել աշակերտների վրայ. հարցաքննութիւնները կատարուել են վերատուգման, կրկնողութեան ու ամփոփման նպատակով։ Հարցաքննութիւնների արդիւնքն ընդհ. առմամբ եղել է գոհացուցիչ։

Հարցաքննութիւններ եղել են հետևեալ առարկաներից

Առարկայ	Դասարան	Դասատու
1 և 2 Հայրենագիտութ	Գ բ. հ. և զ.	պ. Ե. Դաւթեան
3 և 4 Իրաւունքներ	Գ բ. հ. և զ.	օր. Ի. Զոհրաբեան
5 և 6 Երկրաչափ ձևագ.	Բ դ. տղ. և օր.	պ. Ա. Յարութիւնեան
7 Բնակ. պատմութ.	Գ դաս. մ.	տ. Ն. Գերասիմեան
8 Զայնագրութիւն	Գ դաս. մ.	պ. Մ. Կարապետեան
9 Էնդհ. աշխարհագր.	Դ » մ.	պ. Ալ. Յովհաննիսեան
10 Կրօնագիտութ	Դ » մ	Տէր Ե. քհյ. Յովհաննէս
11 Հայրենագիտութ	Ե » մ	» » »
12 Բանահ. ուսուցմ.	Ե » մ	պ. Ա. Գերասիմեան
13 Անգլ. պատմութ.	Ե » մ.	պ. Մ. Կարապետեան
14 Անգ. և Հնդ. աշխարհ	Ե » մ	պ. Ս. Արգարեան
15 և 16 Թուաբանութիւն	Ե » տղ. և օր.	Տէր-Գ. քհյ Կիրակոս.
17 Հայերէն	Զ » մ.	պ. Ա. Գերասիմեան
18 Հայ. գրակ. պատմ	Զ » մ.	պ. Ալ. Յովհաննիսեան
19 Անգլերէն	Զ » տղ.	պ. Մ. Կարապետեան
20 »	Զ » օր.	պ. Ս. Արգարեան
21 Ընդհ. պատմութ.	Զ » մ.	պ. Ալ. Յովհաննիսեան
22 Պարսկերէն	Զ » տղ.	Միրզա Մահմադ
23 Առանին անատ.	Զ » օր.	տ. Ն. Գերասիմեան
24 Ալգեբրա	Զ » տղ.	Տէր Գ. Բ. Կիրակոսեան
25 »	Զ » օր.	պ. Ս. Արգարեան
26 Երկրաչափութ.	Զ » օր.	» »
27 »	Զ » տղ.	Տէր Գ. Բ. Կիրակոսեան
28 Թուաբանութ.	Զ » օր.	պ. Ս. Արգարեան
29 Ռուսերէն	Զ » տղ.	պ. Ե. Դաւթեան
30 Մանկավարժութ.	Զ » մ.	պ. Ա. Գերասիմեան
31 Անգլ. գրակ. պատմ.	Զ » տղ.	պ. Մ. Կարապետեան
32 Քիմիա	Զ » մ.	պ. Ա. Յարութիւնեան
33 Ֆիզիկա	Զ » մ.	» »
34 Տոմարակալութ.	Զ » տղ.	պ. Ս. Արգարեան

Հարցաքննութիւններին բացի տեսչից և երկուական ընթերականներից՝ երբեմն ներկայ են եղել հոգաբարձ. բարձրապատիւ նախագահ Տ. Եղնիկ վրդ. Երկարակեցեան, այլև հոգաբարձուներից Դոքտ. Մ. Ռանդոլֆ, պ. Ալ. Աբրահամեան, պ. Մ. Աբգարեան։

ԳՐԱՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ինչպէս անցեալ տարիներում, այս տարի ևս կարևոր նշանակութիւն է տրուած եղել գրաւոր աշխատանքներին։ Մանկավարժ. Խորհուրդը խորապէս համոզուած այն ըսկզբունքի մէջ, որ աշակերտներն ամեն գիտելիք պիտի կարողանան արտայայտել բանաւորին հաւասար չափով նաև գրաւոր՝ մեծ զարկ է տուել դասարանների զանազան առարկաների գրաւոր աշխատանքներին։ Գրաւոր աշխատանքները գրուած են յատկապէս պատրաստուած ֆորմերի վրայ։ Դրանցից մէկական օրինակ պահւում են և կազմել պիտի տրուեն։

ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐ

Կենտրոնական ու Ս.-Կատարինեան դպրոցների Զ դասարաններն աւարտում են 6 հոգի, որից 4 աղայ, 2 աղջիկ։ Դրանք են՝

1. Մնացականեան Սամս. յոժ գով. (Ա կարգի) յառ. և յոյժ գով. վրք.
2. Մարտիրոսեան Ղազար. » » (Ա կարգի) » » » »
3. Ստեփաննոսեան Արիստակէս գով. (Բ կարգի) » » » »
4. Մարգարեան Սիմէոն » » » » » » »
5 Կիրակոսեան Եղիսաբեթ միջ. (Գ կարգի) » » » »
6. Վարդանեան Մէրիսաթուն » » » » » » »

Ընթացաւարտ աշակերտուհիները ներկայացրել են հետևեալ աւարտական շարադրութիւնները.

1. Մնացականեան Սամսոն — Ընտանեկան դաստիարակութիւն
2. Մարտիրոսեան Ղազարոս — Ս. Նազարեան և իր գրակ. գործուն.
3. Ստեփաննոսեան Արիստակէս — Արևելեան հարցը
4. Մարգարեան Ս. — Շեքսպիր և իւր գրակ. գործունէութիւնը
5. Կիրակոսեան Եղիսաբեթ — Համիդական ռեժիմ
6. Վարդանեան Մ. — Մ. Նալբանդեանն որպէս հրապարակագիր.

Բացի այս շարադրութիւններից՝ ընթացաւարտները գրել են նաև յանպատրաստից շարադրութիւններ տարբեր նիւթերի մասին։ Աւարտական ու յանպատրաստից շարադրութիւններն ընդհանրապէս՝ քննիչ յանձնախմբի գնահատութեան համաձայն՝ պէտք է նկատել գոհացուցիչ։

Վերջացնելով ասելիքս՝ դառնում եմ կեանքի շէմքին կանգնած մեր սաներին, որոնց ցանկանում եմ տեսնել գոտեպնդուած դէպի կատարեալն ունեցած ձգտումով և թափանցուած շիտակ դաստիարակութեան գաղափարներով։

Բարոյական վսեմ պարտականութիւն է ընկնում Ձեզ՝ ցիրուցան, տարաբախտ ու բազմակարօտ ժողովրդի զաւակներիդ վրայ, լցուել նրա սիրով և ձեր ոյժերին համեմատ օգտակար լինել նրան։ Ժողովրդին որտով մօտ ու նրա բազմազան կարիքների առջև պատասխանատու՝ ահա թէ ինչը պիտի լինի ամենից արտայոդիչը, որը պիտի համոզէ մեզ, սիրելի սաներ, որ դուք ազգային դպրոցի ոգով ու առողջ սկզբունքներով էք դաստիարակուած ու կրթուած։

Մեծ Վարդապետի անմահագէս սէրն ու նուա պատրաստական անձնուիրութիւնը թող լինին, այն վսեմ իդէալը, դէպի որը պիտի ձգտէք դուք կեանքի մէջ ամեն ժամանակ՝ և՛ տրամութեան, և՛ հրճուանքի, և՛ խանդավառ յաղթանակի, և՛ դժխեմ պարտասուգի օրերում։

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Նախքան վերջացնելս՝ կ'ուզէի մի անգամ ևս երկու խօսքով պարզել արուած բարեփոխումներից ու քայլերից մի քանիսը, որոնք բղխելով դպր. Մանկ. Խորհուրդի ընդգրկած առողջ ու շիտակ սկզբունքներից՝ կատարուած են՝ մատաղ սերունդի կրթութիւնն ու դաստիարակութիւնը առողջ հիմքերի վրայ դնելու և դպրոցական գործն իրան վայել ուղիղ հունի մէջ ձգելու համար։

Ահա շատերից մի քանիսը։ Վերջին եռամեակում դպրոցներիս Մանկավարժական Խորհուրդը պատրաստել է ընդարձակ ծրագիր, առանց որի ոչ մի դպրոց չի կարող իսկական յառաջադիմութեան շաւղի մէջ մտնել։ Ծրագրի մէջ մտցրել և դասաւանդել է տեղիս համար նոր այնպիսի առարկաներ, որոնք ընդունուած են բոլոր քիչ թէ շատ բարեկարգ դպրոցներում։ Պատուարժ. Հոգաբարձութեան աջակցութեամբ՝ դպրոցներիս կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով՝ բացել է 6-րդ դասարան։ Կազմել է ընդարձակ «Ներքին կանոնադրութիւն» մշակել է աշակերտական, ծնողական կանոններ. իւր սեռչի միջոցով իւրաքանչիւր տարի հրատարակել է մանրամասն տեղեկագիրներ, որոնց մէջ հանգամանօրէն պարզուած են դպրոցներիս ընթացքն և աշակերտութեան բարոյական-կրթական-դաստիարակչական վիճակը։ Ջանացել է ստեղծել դասաւանդման եղանակների ու դաստիարակչական միջոցների միանմանութիւն՝ փորձնական դասերի և մանկավարժական խնդիրների շուրջն արուած խորհրդակցութեանց միջոցով. նպաստել է աշակերտների ինքնագործունէութեան ու ինքնազարգացմանը՝ կենսուրախութիւն և հետաքրքրութիւն մտցնելով նրանց մէջ և՛ն, և՛ն, և՛ն։

Ձենք կասկածում, որ Ղուդայի գիտակից հասարակութիւնն ըմբռնած պիտի լինի, որ վերջին եռամեակի Ուսումն. Վարչութիւնը՝ Մանկավարժական Խորհուրդը ճիգեր չի խնայել ազգային դպրոցների բարեկարգութեան ու յառաջադիմութեան համար։ Ակնյայտ է նաև այն, որ վերջին եռամակի Մանկավարժական Խորհուրդը չեկաւ քանդելու, այլ լրացնելու եւ շինելու. նա եկաւ դպրոցական գործին հոյակապ շէնքի հիմքերն ամրապնդելու։

Որ սա պարզ ու որոշ է եղել, թող ապացուցեն ոչ միայն այն յաճախակի գոհունակութիւնները, որ շատերից լսել ենք, այլև այն գրաւոր արտայայտութիւնները, որ եղել են մամուլի էջերում, այն բազմաթիւ դրուատական գրութիւնները (նոյնիսկ հեռագիր), որ մեզ են ուղղուած եղել։ Շնորհակալական խորին զգացում ունինք հանդէպ այդ խրախուսանքների, որոնք եկել են վերջնականապէս հաստատելու, որ դպրոցական գործի մէջ մենք յառաջ են շարժուել անվհատ ու հաստատուն քայլերով։

Սակայն ինքներս աւելի քան ուրիշը գիտենք այն թերութիւնները, որ անխուսափելիօրէն մնացել են գործի մէջ։ Այդ թերին է, որ պիտի լրացնեն մեր յետնորդները։ Դպրո-

ական գործի կառեցման ու խեղաթիւրման ամեն մի քայլ ժողովրդական իրաւացի դժգոհութեան ու ցասումին պիտի արժանանայ։

Թող գիտենան, որ մեր գործունէութեան մէջ եղանք անյողդողդ և երբեք վատաբար յետս չընկրկեցինք և վաճառի ու սակարկութեան չհանեցինք դպրոցական գործի վսեմ իդէալն ու բարձր սկզբունքները։

Տեսուչ դպրոցների՝ Ա. ԳԵՐԱՍԻՄԵԱՆ

23 յունիս, 1913 թ.
Զուղա—Սպահան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՈՅՑ

դպրոցները	աշակերտների թիւը					աշակերտների տարիքի միջին թիւը	բանիւոսն ունեցող ծնողներ	%
	աշակերտների ընդհանուր թիւը	տղաների թիւը	%	աղջիկների թիւը	%			
Մանկապ.	125	57	45,75	68	54,25	6	118	94,75
չհաշուածներ	13							
	138							
Գ.-Քանան.	317	163	51,5	154	48,5	11	246	77,5
Ս.-Կատար.	41	41	100	—	—	16,75	34	83
Կենտրոնական	59	—	—	59	100	15,75	46	77,75
Համագումար	417	204	49	213	51	14,25	326	78,25

(շարունակ.)

Բացիա՞ն եղ ուր (իսկին, կամ կիսով)	%	Բացի՞ն հայրց է հանցաւ	%	Բացի՞ն հայրց է ուսուցին	%	Բացի՞ն հայրց է մանրավաճառ	%	Բացի՞ն հայրց է արհեստաւոր	%
7	5,75	9	5,75	5	4	2	1,75	33	26,75
71	22,5	12	3,75	8	2,5	20	6,25	83	26
7	17	2	5	—	—	1	2,5	13	31,75
13	22,25	8	13,5	4	6,75	4	6,75	16	27,25
91	21,75	22	5,25	12	3	25	6	112	26,75

(շարունակ.)

Բացի՞ն հայրց է վանական	%	Բացի՞ն հայրց է գարձակատար	%	Բացի՞ն հայրց է երիտասարդ	%	Բացիսի՞ հայրց է մեկ (տարեարձով)	%	Բացիսի՞ հայրց է ծառայ	%
12	10	14	11,25	1	1	5	4	21	17
18	5,75	26	8,5	7	2,25	25	8,25	61	19
3	7,25	6	14,5	6	14,5	1	2,5	2	5
5	8,5	6	10,25	—	—	2	3,25	2	3,25
26	6,25	38	9	13	3,25	28	6,75	65	15,5

(շարունակ.)

Ց Է r Ը				ծնողների գրագիտութ.				ցիրքա-	
հաշիվ՝ ճարտ և գիտեվանում	%	հաշիվ՝ ճարտ և անգրագ, կամ ուրիշ զբաղումով	%	հաշիվ՝ ճարտ և գրագիտ	%	հաշիվ՝ մարտ և գրագիտ	%	հաշիվ՝ ցն ճարտուս	%
3	2,75	20	16	101	81	91	73	10	8
9	2,75	48	15	232	73,25	188	59,5	10	3,35
—	—	7	17	33	80	18	44	—	—
2	3,25	10	17,25	52	88,25	36	61	4	6,75
11	2,75	65	15,5	317	76	242	58	14	3,5

(շարունակ.)

կ ա ց վ ի ց ա կ						թոշակաստութիւն			
հաշիվ՝ ցն միջակ	%	հաշիվ՝ ցն չքաւոր	%	հաշիվ՝ ցն աղքատ	%	հաշիվ՝ ցն թոշակաստ.	%	հաշիվ՝ ցն ծրիակարգ	%
58	46,5	28	22,25	29	23,25	57	45,5	68	54,5
114	36	84	26,5	109	34,25	99	31,25	218	68,75
25	61	12	29,25	4	9,75	15	37	26	63
34	57,5	19	32,25	2	3,5	33	56,5	26	43,5
173	41,5	115	27,5	115	27,5	147	35,25	270	64,75

(շարունակ.)

Ցպաս ստացողներ				Երբեւեկ ու գիշերօթիկ				Որտե-	
քանի՞սն են ձրիս բար գլխս ստացած	%	քանի՞սն են ձրիաբ. դաս. պետ. ստացած	%	քանի՞սն են երբեւեկ	%	քանի՞սն են գիշերօթիկ	%	քանի՞սն են ցուրտքեցի	%
38	30,5	125	100	125	100	—	—	107	85,5
160	50,5	184	58,25	302	95,25	15	4,75	263	83
17	41,5	20	49	27	66	14	34	23	56
16	27	16	27	58	98,25	1	1,75	55	93,25
193	56,25	220	52,75	387	92,75	30	7,25	341	81,75

(շարունակ.)

— ազգությունքներ								դպցի	
ուս տար. քանի՞ հոգի են հիւանդացել	%	քանիսի՞ առողջանալուց է դաս	%	քանիսի՞ առողջանալուց է դիշան	%	քանիսի՞ առողջանալուց է դաս	%	քանի՞սն են օտար վայրերից	%
113	90,5	6	4	22	17	97	79	18	14,5
222	70	1	0,25	48	15	268	84,75	54	17
29	70,75	—	—	10	24,5	31	75,5	18	44
22	37,25	—	—	9	15,25	50	84,75	4	6,75
273	64,5	1	0,25	67	16	349	83,75	76	18,25

(շարունակ.)

ցուր վիճակ						ընթերցանութիւն			
հիւանդութեան հացի՝ դեմք է երել	միջին թուով օրական հացի՝ ժամ են մնում	հացիսի՝ ծարիկը է պատուաստած	%	հացիսի՝ ծարիկը չէ պատուաստած	%	հացի՝ ան ենք ընթերցանութ. պարապում	%	իւրաքանչ. հացի՝ զիրք է կարդացել (միջին թիւ)	ամբողջ դարձը հացի՝ կամ զիրք է կարդացել
225	10	119	95	6	5	—	—	—	—
433	8,5	280	88,5	37	11,5	164	100	14	2260
30	7,5	36	87,75	5	12,25	41	100	20	808
34	7,5	52	88,25	7	11,75	59	100	15,75	929
497	8	368	88,25	49	11,75	264	100	16	3997

(շարունակ.)

յառաջադիմութիւն									ցնայիցն աշխատանքի կարգ.
մէկ աշակերտի միջին թուով ի՞նչ գիրք են ընկնում		հացիսի՝ տար. յառ. գիրքերի միջին թիւն է յաւ	%	հացիսի՝ տար. յառ. գիրքերի միջ. թիւն է միջակ	%	հացիսի՝ տար. յառ. գիրքերի միջին թիւն է բոլ	%	հացի՝ ան ենք ցն ցնայիցն աշխատանքի կարգ.	%
հացի՝ լաւ, հացի՝ միջակ, հացի՝ բոլ									
		12	31	17	44,75	9	25	—	—
2 լ. $3\frac{3}{4}$ մ. $3\frac{1}{4}$ բ.		111	35	144	45,5	62	19,5	253	79,75
$8\frac{1}{2}$ լ. $3\frac{1}{2}$ մ. 1 բ.		2	5	16	39	23	56	25	61
$2\frac{3}{4}$ լ. $6\frac{1}{2}$ մ. $2\frac{1}{4}$		8	13,5	39	66,25	12	20,25	59	100
3 լաւ, 4 միջ. 3 բ.		121	29	199	47,75	97	23,25	337	79,75

(շարունակ.)

Վարք		Լիտոդուքիւն						Յանցան-	
հանցիք՝ վարքն է լաւ	%	հանցիք՝ լիազարութիւնն է լաւ	%	հանցիք՝ լիազարութիւնն է միջակ	%	հանցիք՝ լիազարութիւնն է թոյլ	%	հանցիք՝ ջանգաստութիւնն է լաւ	%
125	100	12	32	13	34	13	34	10	26
308	97,25	84	26,5	159	50	74	23,5	59	15,5
41	100	25	61	16	39	—	—	36	88
59	100	14	23,75	40	68	5	8,25	33	56,25
408	97,75	123	29,5	215	51,5	79	19	128	30,5

(շարունակ.)

Սիրուքիւն				Ուշադրուքիւն					
հանցիք՝ ջանգաստութիւնն է միջակ	%	հանցիք՝ ջանգաստութիւնն է թոյլ	%	հանցիք՝ ուսարութիւնն է լաւ	%	հանցիք՝ ուսարութիւնն է միջակ	%	հանցիք՝ ուսարութիւնն է թոյլ	%
14	37	14	37	11	29,5	13	33,5	14	37
131	45,5	124	39	71	22,5	151	47,5	95	30
4	9,5	1	2,5	36	88	5	12	—	—
21	35,5	5	8,25	29	49,25	25	42,25	5	8,5
159	38,25	130	31,25	36	32,5	181	43,5	100	24

(շարունակ.)

Բացակայություն		Հանիրոդ տարին են ցոյց դասարանում						Համազգեաս	
դպրոցի բացակայութ. ընդհ. թիւը	մի աշակերտ միջին հաշուով քանի՞ բացակայել է դասի	քանի՞սն են Ա. տարին	%	քանի՞սն են Բ տարին	%	քանի՞սն են Գ տարին	%	քանի՞ հոգի համազգեաս ունին	%
7455	59	109	87	16	13	—	—	99	77
26919	85	185	58,5	115	36,25	17	5,25	271	85,5
1490	36,25	40	97,5	1	2,5	—	—	37	95
4031	68,25	47	79,75	11	18,5	1	1,75	59	100
32440	78	272	65,25	127	30,25	18	4,5	367	88

(շարունակ.)

Փոխադրութիւն								Աշակերտների ընդհ. թիւը		
քանի՞սն են փոխադրուում	%	քանի՞սն են մնում	%	քանի՞սն են վերաքննիչի	%	քանի՞սն են արձակում	%	սեպտեմբերին	յունուարին	յունիս 1-ին
95	75,5	30	24,5	—	—	—	—	112	127	125
										+13
										138
160	50,5	146	46	6	2	5	1,5	313	314	317
33	80,5	4	9,75	4	9,75	—	—	49	42	41
33	56,5	14	23,75	12	20	—	—	61	60	59
226	54,25	164	39,25	22	5,25	5	1,25	423	416	417
						Մ անկապ.		112	127	138
								535	543	555

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ, ԳԷՈՐԳ—ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը 1912 թ. Օգոստ. 11-ին ստանձնելով իր պաշտօնը, մինչև ներկայ ուսումն. տարավերջ ունեցել է ընդամենը 60 նիստ։

Յարգելի Հասարակութեանը մի ամփոփ գաղափար տալու համար Հոգաբարձութեան 1912-1913 տարեշրջանի գործունէութեան մասին, ներկայացնում ենք ի ստորև մի համառօտ տեղեկագիր։

Դպրոցներս սոյն տարեշրջանում ունեցել են 98671 ղրուան մուտք և 97532 ղուան ելք։

Մուտքերի մէջ գլխաւոր տեղն է բռնում դպրոցապատկան Բոլսրան գիւղի արդիւնքը, որ անցեալ տարի վարձու տալով 7000 լիտր ցորենի և 2500 լ. գարու, ամբողջը փոխադրուեց տեղս և բոլոր ծախքերից ազատ, զուտ եկամուտ տացուեց մօտաւորապէս 2000 թուման։

Բոլսրան գիւղի եկեղեցին վերին աստիճանի խարխուլ և ողորմելի վիճակում գտնուած լինելուն պատճառով քանդուեց և տեղը անցեալ տարուան մէջ կառուցուեց մի ընդարձակ նոր եկեղեցի, որ իր մեծութեամբ Փէրիա գաւառի եկեղեցիների մէջ առաջին տեղն է բռնում։ Հոգաբարձութիւնը նոյն եկեղեցու շինութեան առթիւ նուիրեց 200 թուման։

Յայտնի ճշմարտութիւն է, որ մեր կրթական հաստատութիւնների յառաջադիմութիւնը կախուած է նիւթական ապահով դրութիւնից և բոլորիս սրբազան և բարոյական պարտականութիւնն է միշտ հոգալ այդ մասին, սակայն ցաւօք սրտի պէտք է նկատել, որ մեր մէջ դժբախտաբար

միշտ էլ գրտնուել և գրտնուում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք կրքից դրդուած ամեն ինչ զոհում են միմիայն մեր դպրոցներին նիւթապէս վնասելու նպատակով։

Մեծարգոյ Սէթ, Պօղոս և Ընկ. որոշել է ամեն տարի 200 անգլ. ոսկի (մօտ. 1100 թուման) նպաստ տալ մեր ազգ. երկսեռ դպրոցներին և ամեն տարի էլ արուած խոստման համաձայն ստացուել է նոյն նպաստը խորին շնորհակալութեամբ։ Սակայն ստիպուած ենք այստեղ յակամայից յիշել Ընկերութեան 24 Ջանէր 1913 թ. կրութեան հետևեալ տողերը։

«Հոգաբարձութեանդ յետ և յառաջ նամակներն ստացել եմք և համեմատ նմին ծանօթութեանդն ձեր գրած բարթենրն բոլորն ժամանակին հատուցրել եմք, այլ աւաղ զի ուրիշ բարեկամներէ վարժատանդ կառավարութան վրայ էնպէս մի քաջալերական լրեր չեմք լսում, որն որ շատ տխրալի է։ Բայց և այնպէս կը յուսամք սոյն անյաջող լրեր կարևորութիւն չունենան և գոնեա մասնաւորապէս գումարոյս հանգանակողաց բարի դիտումն ի կատար հասնի, քանզի որքան հասկանամք, փոխարէն օրհնութեան անէծքով են Ջուզայի մեծամասնութիւնն ընդունում։ Այս առթիւ կուզեմք Ձեզանէ փոքր ինչ լուսաւորութիւն ստանալ վասն հանգանակողաց բաւարարութեան. թէ ոչ, կերկնչիմ հատուցումն երկար չը շարունակուի, որն որ շատ տխրալի կանի մեզ»։

Սոյն նամակի ստայօդ տեղեկութիւնը հաղորդուել է տեղիցս այնպիսի մի ծնողի կողմից, որ թէև կարողաւոր, սակայն զանազան անձանց ցուցմունքներով առաջնորդուած և որ գլխաւորն է, յատկապէս Հոգաբարձութեանս որոշման հակառակ ընթանալու դիտաւորութեամբ, զլացել է վճարել իր երեխայի համար նշանակուած մի շատ աննշան թոշակագրամը։ Անշուշտ վերոյիշեալ դժգոհ նամակին Հոգաբարձութիւնը թեմիս Առաջնորդ. պատկառելի Խորհրդարանի հետ միասին տուեց բաւարարացուցիչ պատասխան. և անտարակոյս ենք, որ բոլոր թիւրիմացութիւնները ցրուելով Մեծարգոյ Սէթ, Պօղոս և Ընկ. ինչպէս ցարդ, նոյնպէս և

այսուհետև չպիտի խնայի իր նիւթական աջակցութիւնը մեր ազգ. երկսեռ դպրոցներից, որի համար հրապարակաւ յայտնում ենք խորին շնորհակալութիւն։

ՆՈՐ — ՋՈՒՂԱՅԻ Ս. ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆՊԱՍՏ

Արդէն բոլորիդ յայտնի է, որ Առաջնորդ. փոխանորդ և դպրոցներիս վերատեսուչ Գեր. Հ. Բագրատ վ. Վարդազարեանը մեր ազգ. երկսեռ դպրոցների անձուկ դրութիւնը բարեփոխելու նպատակով, ի թիւս այլ միջոցների, 1909 թ. Յուլիսին տեղիս Ս. եկեղեցիների վարչութիւններից բաղկացած մի ժողովում և նրանց տուած խոստման համաձայն որոշեց, որ իւրաքանչիւր եկեղեցի տարեկան մի որոշ գումար նպաստ տայ դպրոցներիս։ Սակայն ցաւօք սրտի պէտք է այստեղ նկատել որ դպրոցներիս շուրջը վերջին տարիներում ծագած անհիմն ու անտեղի տարաձայնութեան պատճառով, յիշեալ նպաստները մնացել էին անվճար մինչև 1912 թ. Նոյ. 4-ը, երբ Հոգաբարձութեանս հրաւէրով Ազգ. Կեդրոնական դպրոցում Ս. Եկեղեցիների վարչութիւններից բաղկացած մի խորհրդակցական ժողով կայացաւ (բացառութեամբ Դաւրէժ թաղի Ս. Մինաս Եկեղեցու վարչութիւնից) ուր և բացատրուելով դպրոցների կարիքն ու շեշտուելով նշանակուած նպաստի անհրաժեշտութիւնը, բոլոր ներկայ եղողները խոստացան ամբողջ մնացած ժամանակների նպաստները առանց որևէ առարկութեան վճարել մինչ ներկայ թուականը։ Ս. եկեղ. վարչութիւններից իրենց խոստումն յարգողներ եղան միայն Ս. Գրիգոր Լուսաւորչի և Ս. Գէորգայ եկեղեցիների վարչութիւնը, որ լրիւ վճարեց 1910 – 1913 թուականների նշանակուած նպաստը և Ս. Ներսէս եկեղեցւոյ վարչութիւնը, որ վճարեց միայն 30 թուման. իսկ միւսները պատրաստի դրամ չունենալու պատճառաբանութեամբ ցարդ չեն վճարել իրենց եկեղեցիների անունով նշանակուած նպաստը։ Հոգաբարձութիւնս յայտնում է վճարողներին իր խորին շը-

նորհակալութիւնը և սիրում է յուսալ, որ չվարողներն ևս մօտ ապագայում կը վճարեն՝ դպրոցներիս բարգաւաճումն և յառաջադիմութիւնն միայն ի նկատի ունենալով։

ՎԻՃԱԿԱԽԱՂ

Նախորդ Հոգաբարձութիւնը իր անցեալ տարուայ տեղեկագրում յիշեց որ դպրոցներիս օգտին ձեռնարկուած վիճակախաղը յետաձգուած է մինչև որ բոլոր դուրս ուղարկուած հաշիւները ստացուին։ Պատրաստուած 3000 տոմսերից մինչև Մայիսի 10-ը Հոգաբարձութիւնս կարող եղաւ դանձել 1600 հատի գինը, իսկ անվաճառ մնացած 1400 հատը դպրոցներիս հաշուին վերցրուեց։ Վիճակախաղը տեղի ունեցաւ Մայիս 10-ին Կեդրոնական դպրոցի դահլիճում, Հոգաբարձութեանս Գեր. Նախագահի և Կայսերական բանկի Մեծապատիւ Տնօրէնի հսկողութեան ներքոյ։

Վիճակախաղից զուտ արդիւնք մնաց յօգուտ ազգ. երկսեռ դպրոցներիս մօտ 7000 դրամ։

ԵՐԿԱԹԱԳՈՐԾԱՐԱՆ

Հոգաբաձութիւնս միշտ ի նկատի ունէր երկաթագործարանը նորից բաց անել, սակայն հմուտ վարպետ չգտնուելու պատճառով այդ բանը երկար ժամանակ չէր յաջողւում. Անցեալ 1912 թ. Հոկտեմբերին ընկերացանք պ. Արմենակ Յարութիւնեանի հետ, պայմանով որ դրամագլուխը դպրոցից հոգացուի, իսկ ամբողջ հսկողութիւնը և տաշող մեքենայով կատարուելիք գործերը պ. Արմ. Յարութիւնեանի վրայ լինի։ Գալով եկամուտին, պայմանաւորուեցինք միմեանց հետ երկու բաժին անել, մի բաժինը դպրոցներիս, միւսը՝ պ. Արմենակին։ Այն պայմանաւորումից յետոյ վարձեցինք մի պարսիկ վարպետ իր աշակերտի հետ միասին ամսական 200 դրամ ռոճիկով։ Այս առթիւ յայտարարեցինք Նոր—Ջուղայի յարգելի հայ հասարակութեան, որպէսզի երկաթագործութեան հարկեստը սովորել ցանկացողները դիմեն աշակերտելու։ Յարկեստը սովորել ցանկացողները դիմեն աշակերտելու։ Ցաւում ենք յայտնել, որ հակառակ մեր կրկնակի դիմումներին, Նոր—Ջուղայում ոչ ոք չը ցանկացաւ այդ արհեստը սովորել և հետևաբար ոչ ոք էլ չը դիմեց մեզ երկաթագործարան մտնելու։

Հոգաբարձութիւնս ի նկատի առնելով այն հանգամանքը, որ երկաթագործարանից ոչ բարոյական և ոչ նիւթական օգուտ է ստացւում, դժուար թէ պ. Արմ. Յարութիւնեանի հետ պայմանաւորուած ժամանակը լրանալուց յետոյ կարող լինի դարձեալ շարունակել. ուստի ստիպուած պիտի լինինք հակառակ մեր բուռն ցանկութեան՝ փակել երկաթագործարանը։

Արդէն պատրաստուած են նոյն երկաթագործարանում և ի վաճառ են դրուած մի հատ մեծ փակ կառք և մի քաց կառք (ֆայտոն)։ Երկաթեայ աշխատանքից դուրս եկած են նաև երկու ուրիշ բաց կառքեր։ Իսկ որովհետև պ. Արմենակը ուսուցչութեան պաշտօնով զբաղուած լինելուն պատճառով օրական 2-3 ժամ աւելի միջոց չէ գտել գործելու, ուստի այս ութն ամիսների ընթացքում հազիւ կարողացել է մի ջրհան մեքենայ պատրաստել և մի քանի ուրիշ մանր նորոգութիւններ անել։

Հ. ԳԷՈՐԳ Վ. ԹՈՒՐԵԱՆԻ ՀԱՐՑԸ

Կալկաթայից մեր հայրենակից մեծարգոյ պ. Պետրոս Հ. Կրէտը Մեծ. պ. Մայիլ Ս. Եռայեանին ուղղուած մի գրութեամբ առաջարկել էր որ Նոր—Ջուղայեցիները մի խնդրագրով դիմեն Վեհ. Կաթուղիկոսին, աղերսելով որ բարեհաճէ Բարձր. Հ. Գէորգ վ. Թուրեանին, որ մի ժամանակ Կալկաթայի Մարգասիրական ճեմարանում տեսչի պաշտօն է վարելիս եղել (որպէս աշխարհական), ձեռնադրել եպիսկոպոս և նշանակել Պարսկա—Հնդկաստանի համար թեմական առաջնորդ։ Պ. Պ. Կրէտը ի դէմս մեր մի խումբ այլ հնդկաբնակ

հայրենակիցների, նոյն գրութեամբ խոստացել էր որ եթէ յաջողուի Հ. Թուրեանի Նոր – Զուղա գալը, պատրաստ են իրենք Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի անունով հանգանակուած 120 հազար ռուփու գումարը յատկացնել Նոր – Զուղայի Ազգ. երկսեռ դպրոցներին, այն միամտութեամբ որ Հ. Թուրեանի հոկողութեան ներքոյ նոյն գումարը աւելի նպատակայարմար գործադրութիւն կունենայ։ Այս կարեւոր խնդրի առթիւ 1912 թ. Դեկտ. 21 ին թեմիս Առաջնորդական Խորհրդարանը և Հոգաբարձութիւնս Մեծ. պ. Մայիլ Եսայեանի հետ միասին խորհրդակցական մի խառն ժողով ունեցան Ազգ. Առաջնորդարանում Բարձր. Հ. Եղնիկ վ. Երկարակեցեանի նախագահութեամբ։ Ժողովը յիշեալ խնդիրը բազմակողմանիօրէն քննելուց յետոյ, որոշեց հետեւեալ իմաստով մի պատասխան գրել Մեծ. պ. Պետրոս Կրէտին. նախ որ Ազգիս Վեհ. Հայրապետի նոր շնորհած հրահանգի համաձայն թեմիս ամբողջ հայութեան քուէարկութեամբ պէտք է ընտրուի թեմական առաջնորդը, այնպէս որ Հ. Թուրեանին թեմական առաջնորդ նշանակելու իրաւունքը տրուած չէ միմիայն Նոր – Զուղայեցիներիս։ Երկրորդ որ երկար տարիների փորձառութիւնը ցոյց է տալիս որ թեմական առաջնորդը ծանրաբեռնուած լինելով վիճակային և ժողովրդի դատական բազմաթիւ ու բազմապիսի գործերով, հնարաւորութիւն չի կարող ունենալ լիովին նուիրուելու կրթական գործին։ Ուստի աւելի նպատակայարմար կլինի որ Հ. Թուրեան՝ը հրաւիրուի տեղս իբրև վերատեսուչ Նոր-Զուղայի Ազգ. կրթական հաստատութիւնների։

Այս նամակը ստանալով պ. Պետրոս Կրէտը իր 1913 թ. Մարչ 20 գրութեամբ համաձայնութիւն է յայտնել Հ. Թուրեանի տեղս որպէս վերատեսուչ գալուն, աւելացնելով որ այդ առթիւ պէտք է դեռ տեսնուել միւս յարգելի նուիրատուների հետ և վերջնական պատասխան կտայ նրանց հետ խորհրդակցելուց և նրանց համաձայնութիւնն ևս ստանալուց յետոյ միայն։ Հոգաբարձութիւնս անհամբեր սպասում է պ. Պետրոս Կրէտի վերջնական պատասխանն կարդալու։

Ազն. Տ. Վաղվաղուէ Քանանեանի ներկայացումը

Նոր-Զուղայի Գէորգ Քանանեան ազգ. դպրոցի հիմնադիր և պատուաւոր հոգաբարձուի Ազն. տ. Վառվառէ Քանանեանը իր 12 Մայիս 1913 թ. գրութեամբ բարեհաճել է իր կողմից ներկայացուցիչ նշանակել տեղս Մեծարգոյ բժիշկ պ. Մ. Ս. Պ. Ազանուրին։ Ուրախ ենք յայտնելու որ յարգելի բժիշկը արդէն ընդունել է նոյն առաջարկութիւնը և առաջիկայ ուսումն. տարեսկզբից մասնակցելու է Հոգաբարձութեանս ժողովներին։

Բ Ի Ւ Տ Ճ Է

Դպրոցներիս ուսուցիչ-վարժուհիների ռոճիկների աւելացման պատճառով անցեալ տարուանից մօտաւորապէս 5000 ղուռն և անհրաժեշտ ծախքերից մօտ. 1000 ղուռն աւելացել է բիւտճէի վրայ։ Սակայն ուրախ ենք յայտնելու, որ ներկայ ուսումն. տարուայ ընթացքում, բացի սովորական ծախքերից Հոգաբարձութիւնս հնարաւորութիւն է ունեցել վերադարձնելու նաև Նոր-Զուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան 1905 թուից մնացած պարքը։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Այս տարի Մեծ. պարոնայք Մայիլ և Մարտիրոս Ս. Եսայեանները արտասահմանից բերել են տուել և նուիրել դպրոցներիս երաժշտական խմբին 3000 ղուռնի արժողութեամբ 15 կտոր երաժշտական գործիքներ։ Բացի սրանից դպրոցներիս կարուձևի համար նուիրել են նաև մի կարեմեքենայ և Մանկապարտէզին՝ 400 ղուռնի արժողութեամբ զանազան իրեր։

Յարգելի Դր. Ռանդոլֆն նոյնպէս նուիրել է մի կարամեքենայ կար ու ձևի համար և մի մեծ թմբուկ երաժշտական խմբին։

Բոլոր յարգելի նուիրատուներին Հոգաբաձութիւնս հրապարակով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Այն համառօտ տեղեկագիրը վերջացնելուց առաջ, Հոգաբարձութիւնս իր անկեղծ շնորհակալութիւնն է յայտնում մեր երկսեռ դպրոցների բոլոր բարերարներին և բոլոր թոշակատու աշակերտաց ծնողներին, որոնք չեն խնայել իրենց օժանդակութիւնը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում։ Շնորհակալութիւն ենք յայտնում նաև դպրոցներիս տեսուչ պ. Ա. Գերասիմեանին և բոլոր ուսուցչական կազմին. իրենց եռանդուն գործունէութեան համար և ի վերջոյ՝ դպրոցներիս երկարամեայ աշխատասէր ուսուցիչներ Ա.րժ. Տէր-Վահան քահ. Աղանեանին և Տէր-Գարեգին քահ. Կիրակոսեանին, որոնք առաջիկայ ուսումն. տարեսկզբից թողնելու են դպրոցները և հեռանալու տեղից դէպի Հնդկաստան վիճակաւորութեան։

17 Յունիս. 1913 թ.
Ջուղա—Սպահան

Ն. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ, Գ. ՔԱՆԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԻՒՂԵՐԻ

1912—1913 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՈՒԱՑ։

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԱՑ

1913

ՋՈՒՂԱ—ՍՊԱՀԱՆ

Հաշուեկշիռ Ել-և-մտից Ազգ. Կենդր. Տղայոց, Գէորգ-Քանանեան վան 1912—13 ուսումն. տարւոյ, ի միոյ

ՄՈՒՏՔ

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Առ մին Օգոստոսի 1912 թ. պարտատ .			7886	50
Բաթաւիոյ Ազգ. Հաստատու. Վարչութիւն.				
Ստացուած Բաթաւիոյ Հայ Ազգ. հաստատութ. Գատուարժան Ատենից ի հաշիւ Կենդր. դպրոցի Մ. և Ց. Ուսումնարանից Նուէր առ Ս. Կատ. Օր. դպր. ռուփիք 4927-9-1 առ 100-ը 365 դրամով			17985	70
Ստացուած նպաստներ				
Մեծ. պ. պ. Սէթ Պօղոս և Ընկերութեան մի ամեայ 1913 թուի 200 անգլ. ոսկւոյ նպաստը	10850			
Սինկափուրայ Մեծ. պ. պ. Ստեփաննոս Պօղոս և Ընկերութեան 19 անգլ. ոսկւոյ և 2 շիլինգի նպաստը տեղւոյս Մեծ. պ. պ. Եսայի Սարգիս և Ընկերութեան միջոցաւ. 54 դրամով առ պատնդը	1031	40		
Ս. Ամենափր. Վանքից դպրոցներիս երգեցիկ խմբի օգտին 1913 տարէ համար . .	240			
Ս. Գրիգոր Լուսաւորիչ. Ս. Գէորգ և Ս. Ներսէս եկեղեցեաց նպաստները . . .	2900			
Կուսանաց Մենաստանից . . .	500			
Բաթաւիոյ Մեծ. պ. Գէորգ Տէր Կ. Աբգարեանից իրեն տան և այգւոյ վարձերը իբրև նպաստ դպրանոցիս չքաւոր աշակերտաց համար	579	$87\frac{1}{2}$		
Վեհափառ Շահի տարեկան 100 թումանի նպաստը. ի կէս մասը ըստ Նոր կարգադրութեանն	500			
Ս. Յովհաննու Եկեղեցւոյ Երեցփոխներից պանդոկի 1911 և 1912 թուէ վարձերի $\frac{1}{2}$ մասը համաձայն պ. Մարտիրոս Ս. Տէր Ոսկանեանի կանոնադրութեան ի յիշատակ իւր հանգ. տիկնոջ	400		17001	$27\frac{1}{2}$
Ներկայացումներ				
Ստացուած մանկական երեկոյթից, ներկայացումներից, ապօրտից և այլն . . .			1325	85
Թոշակադրամ				
Ստացուած թոշակադրամ դպրոցներիս կարողաւոր աշակերտ-աշակերտուհիներից . .			1350	
Գանձանակադրամ				
Ստացուած Նոր-Զուղայի եկեղեցեաց գանձանակադրամներից			44	$07\frac{1}{2}$
Ձեռագործի նիւղից				
Ստացուած երկու անգամ վիճակախաղի դրուած ձեռագործի զանազան պատրաստուած նիւթերի գին			427	
Փոխադրելի			46020	40

և Ս. Կատարինեան Օրիորդաց Ուսումնարանաց Նոր—Զուղայի, Օգոստոսի 1912 ց'31 Յուլիսի 1913 ամի:

ԵԼՔ

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Ռոճիկի հաշիւ				
Վճարած ուսումնական տարւոյս ընթացքում ռոճիկներ ուսուցիչ-ուսուցչուհիներին . .			49496	70
Ծառայից վարձի հաշիւ				
Վճարած ուսումնական տարւոյս ընթացքում վարձեր դպրոցների ծառաներին . . .			4410	
Ստեղնեղու հաշիւ				
Վճարած Սաէշընէրու գին . . .			588	65
Մանր ծախուց հաշիւ				
Վճարած զանազան մանր իրերի գին, դպրոցները ջրելու վարձ հայլն			1209	25
Կահ-կարասեաց հաշիւ				
Վճարած 15 հատ դրասեղանների, 12 աթոռների և այլ զանազան կահ-կարասեաց գին .			1633	75
Տոկոսի հաշիւ				
Վճարած Հայ. Բարեգործական Ընկերութեան 1000 թումանեաց 1 տարէ տոկոսը 9%-ով .	900			
Վճարած Յովսէփ Պողոսխանեանի Աւանդի 500 թումանեաց տոկոսը 6%-ով . . .	300		1200	
Պարտուց հաշիւ				
Վճարած Հայ. բարեգործ. Ընկերութեան տոկոսով պարտք ստացած դումարը . . .			10000	
Բոլորան գիւղի հաշիւ				
Վճարած Բոլորան գիւղի բերքը Զուզա փոխադրելու վարձը և այլ ծախսեր . . .			13538	70
Զիգան գիւղի հաշիւ				
Վճարած Զիգան գիւղի բերքը Զուզա փոխադրելու վարձ և այլ ծախսեր . . .			4893	70
Փոստի հաշիւ				
Վճարած զանազան նամակների փոստի ծախսեր			25	10
Հոգեւոր դպրանոցի հաշիւ				
Վճարած Հոգեւոր դպրանոցի Բոլորան գիւղի $\frac{1}{6}$ բաժնի (1 գօնգի) զուտ արդիւնքը . .			3680	25
Ծօնածառի հաշիւ				
Վճարած մանկական երեկոյթի ծախսերը .			593	20
Հեռագրի հաշիւ				
Վճարեալ զանազան հեռագրների ծախս .			360	40
Փոխադրելի			91629	70

ՄՈՒՏՔ

	Ղրան	Սենք	Ղրան	Սենք
Փոխադրուած			46020	40
Դրավաճառանոցի հաշիւ				
Ստացուած դպրոցներիս դրավաճառանոցից անդլ. գրքերի արժէքները			1343	
Գեորգ Բանանեան Դպրոցի հաշիւ				
Ստացուած տեղւոյս Կայսերական բանքից 25 հազար թուման տոկոսը 6 Յունվարից 1912. մինչև Յունվար 1913.			10000	
Տոկոսի հաշիւ				
Ստացուած տեղւոյս Կայս. Բանքից հանգ. Տէր Խաչիկ քհնյ. Թ. Ամիրջանի կտակած 1000 ղրանեայ մի տարէ տոկոսը . .	40			
Հանգ. տիկին Սարրա Ազանեանի կտակած 1000 ղրանեայ մի տարէ տոկոսը . .	40		80	
Հանգ. Գրիգոր Գասպարեանի հաշիւ . .				
Ստացուած հանգ. Գ. Գասպարեանի կտակած տան և այգւոյ սոյն տարէ վարձերը . .			540	
Հանգ. Տիրուհի Բալասան Տէր Սարգսեանի հաշիւ				
Ստացուած հանգ. Տիրուհւոյ կտակած այգւոյ 1912 և 1913 թուէ վարձերը . . .			140	
Բոլորան գիւղի հաշիւ				
Ստացուած Բոլորան գիւղի 1912 թուէ ցորենի և գարու արդիւնքները			36092	20
Զիգան գիւղի հաշիւ				
Ստացուած դպրոցական Զիգան գիւղի 1912 թուէ ցորենի և գարու արդիւնքները .			11327	15
Վիճակախաղի հաշիւ				
Ստացուած վաճառուած վիճակախաղի տոմսերի գները և շահող տոմսերի տասանորդների մասը			9899	50
Պահանջից հաշիւ				
Ստացուած Գորգագործարանին փոխարինաբար տրուած գումարը	500			
Ստացուած օր. Կ. Յարութիւնեանին տրուած կանխավճար ռոճիկը	600		1100	
Գումարն է			116542	25

ԵԼՔ

	Ղրան	Սենք	Ղրան	Սենք
Փոխադրուած			91629	70
Տպագրութեան հաշիւ				
Վճարած Ս. Ամենափրկ. Վանքի Տպարանին զանազան յայտարարութիւններ, վկայագրեր և այլն տպագրելու ծախս և թղթադին .			652	
Ձեռագործի հաշիւ				
Վճարած զանազան նիւթերէնների գին գնուած թէ տեղւոյս և թէ Եւրոպայից պատուիրած			2683	15
Վիճակախաղի հաշիւ				
Վճարած Գորգագործարանից գնուած վիճակախաղի դրուելիք գորգերի ամբողջ գինն .	8000			
Վճարած շահող տոմսերի շահած դումարների մասը	2081		10081	
Նորոգութեան հաշիւ				
Վճարած դպրոցայ անհրաժեշտ նորոգութեանց ծախսերը			926	75
Պեսնավարձի հաշիւ				
Վճարած կուսանաց Մենաստանի սոյն տարէ գետնավարձը			500	
Ճանապարհածախսի հաշիւ				
Վճարած օր. Կ. Յարութիւնեանին Կովկաս վերադառնալու ճանապարհածախս . .			600	
Դեսնահարկի հաշիւ				
Վճարած Դպրոցայս կալուածոց Տէրութեան հարկերը			105	75
Սանկտպարտէզի հաշիւ				
Վճարած Մանկապարտէզի համար զանազան իրերի գին			261	
Վառելիքի հաշիւ				
Վճարած Դպրոցների համար վառելափայտի գին			1810	55
Պարսկերէն գրքերի հաշիւ				
Վճարած անցեալ տարէ գնած պարսկերէն գրքերի մնացորդ գինը			40	
Հայերէն գրքերի հաշիւ				
Վճարած Դպրոցների գրավաճառանոցին հայերէն գրքեր գնելու համար . . .			2320	
Երաժշտական նիւղի հաշիւ				
Վճարած երաժշտական խմբի ղեկավար պ. Մ. Կարապետեանին ներկայ տարուայ նուէրը .			500	
Հանգ. Գրիգոր Գասպարեանի հաշիւ				
Վճարած վերոյիշեալի կտակած տան մանր նորոգութեան ծախս			7	50
Բալանս փոխադրելի			4424	85
Գումարն է			116542	25

Մանոթ.	ա.	Ուսումնարաններս ունէին առ մին Յունվարի 1913 ամի	
		ի խնամս Ս. Յովհ. Եկեղ. Հայոց Բաթաւիոյ	
		Կենտրոնականն	Գիլդր 10300—
		Ս. Կաթ. օր. Դպր.	» 7400—
	բ.	Ի խնամս Ս. Լուս. Եկեղ. Հայոց Սինկափուռայ Մաուիլք	757—50
	գ.	Սպահանի Կայսերական Բանքում Գէորգ Քանանեան	
		Դպրոցի և մանկապարտէզի դրամագլուխը	ղուռն 250000—
		Հանգ. տ. Սարրա Աղանեանի կտակածը .	» 1000—
		» Տէր Իսահակ Թ. Ամբարչեանի կտակածը	» 1000—
	դ.	Մակասարի Մեծապ. Միքայէլ Ստեփաննոս և Ընկերութեան վաճառատանը հանգ. Աւետիք Ն. Կրբէտեանի կտակած գումարը . . .	Գիլդր 6507—70

Մանոթ.	ե.	Պարտք մնացած նախկին ժամանակներից	
		Հոգևոր Դպրանոցին	ղուռն 2000—
		Հանգ. Յ. Պողոսեանեանի Յանձնախմբին (տոկոսով)	» 5000—
		Ս. Կաթ. Օր. Դպր. անձեռնմխելի դրամագլխին (որից 5250 ղուռնը Բոլորան գիւղի գնման համար է վճարուել, իսկ մնացորդը նախկին Հոգաբարձութիւնն էր ծախսել) . .	» 7541—90
			14541—90

Հաշուեկշիռ Եր-և-մտից Ազգային Արհեստագիտական

ՄՈՒՏՔ

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Պատրաստ գումար անցեալ տարուանից .			819	85
Կօշկակարանոցի հաշիւ				
Ստացուած Կօշկակարանոցի 12 ամսուայ մուտքն			13388	
Զուհլականոցի հաշիւ				
Ստացուած Զուհլականոցի 12 ամսուայ մուտքն			8541	75
Տպոսի հաշիւ				
Ստացուած Մեծապ. պ. պ. Արզարեանց դրամագլխի 18 ամսէ (Յունվարից 1912 յՅունիս 1913.) տոկոսը ռուփիք 1871—15—5 Ա.Գիշիկ արտիից			6807	70
Պարտուց հաշիւ				
Ստացուած Սինկափուրայ Մեծապ. պ. պ. Ստեփաննոս Պողոս և Ընկ. 8 Անգլ ոսկւոյ նպաստը տեղւոյս Մեծապ. պ. պ. Եսայի Սարգիս և Ընկերութեան միջոցաւ . . .			432	
Պահանջից հաշիւ				
Ստացուած Եազդի պ. Գ. Ընջուրզուլեանից իրեն մօտ մնացած աւանդ գումարը Զուհլականոցի վարձուելի վարպետի համար . .			600	
Երկաթագործարանի հաշիւ				
Ստացուած Երկաթագործարանից զանազան նորոգութեանց մուտքեր	366			
Ստացուած պ. Արմենակ Յարութիւնեանից որպէս աւանդ	800		1166	
Գումարն է			31755	30

Դպրոցների 1 Օգոստոսի 1912 ց'31 Յուլիսի 1913 ամի։

ԵԼՔ

	Դրամ	Սենք	Դրամ	Սենք
Երկաթագործարանի հաշիւ				
Վճարած նիւթեղինաց դին . . .	6073			
» վարպետի և աշակերտի վարձեր .	3406	65		
» զանազան նորոգութեանց ծախսեր .	142	80		
» ածուխի դին	1041	75		
» զանազան մանր ծախսերի հաշուին .	614	60		
» » գործիքների դին . .	941	10	12219	90
Կօշկակարանոցի հաշիւ				
Վճարած կաշեղինեաց դին . . .	3652	05		
» նիւթեղինեաց դին . . .	1156	45		
» վարպետի և աշակերտների վարձեր	5580			
» զանազան մանր ծախսուց հաշուին .	62	30		
» վառելիքի դին . . .	67	75	10518	55
Զուհլականոցի հաշիւ				
Վճարած մանածի դին	3577	70		
» թել ոլորելու վարձ . . .	478	20		
» թել ներկելու » . . .	558	50		
» տնտեսի, վարպետի և աշակերտների վարձեր	3134	35		
» վառելիքի դին	94	30		
» զանազան մանր ծախսուց հաշուին .	217		8060	05
Բալանս փոխադրելի			956	80
Գումարն է			31755	30

Հոգաբարձութիւն Ազգ. Երկսեռ դպրոցաց՝

Նախագահ՝ Եղնիկ վարդապետ Երկարակեցեան

Գանձապահ՝ Մարտիրոս Մ. Յ. Աբգարեան

Անդամներ՝ Գօքտօր Ռանդոլֆ
Աղանուր Կարապետեան
Թադէոս Ն. Տէր Գալուստեան
Տրդատ Թ. Աբգարեան
Ալէքսան Աբրահամեան
Յ. Մ. Ղարախանեան

Առաջնորդական Խորհրդարանս քննելով գեղեցուս Ազգային Երկսեռ Ուսումնարանաց Նոր-Ջուղայի, սկսեալ ի միոյ Օգոստոսի 1912 յ'31 Յուլիս 1913 ամի, ուղիղ գտաւ զորս, վաւերացուցանէ ստորագրութեամբ Նախանդամոյ և Անդամոց իւրոց ի յ7 Օգոստոսի 1913 ամի, ի Ս. Ամենափրկչեան Վանս Նոր-Ջուղայի։

Նախանդամ Խորհրդարանի՝ Եղնիկ վարդապետ Երկարակեցեան

Անդամք՝ » Մեսրոպ քհնյ Կ. Դաւթեան
Եսայի քհնյ Տէր Ս. Յովհաննէսեան
Գարապետ քհնյ Թումիկեան

20090
2013
Հայաստանի Ազգային գրադարան
NL0431730